

Միացեալ Նահանգները Պատրաստ է Օգնել Հայաստանին՝ Յաղթահարելու Տնտեսական Խնդիրները

Ամերիկայի Միացեալ Նահանգները պատրաստ է օգնել Հայաստանին եւ տարածաշրջանի այլ երկիրներուն՝ յաղթահարելու տնտեսական խնդիրները, որոնք յառաջացած են Ռուսաստանի մէջ տնտեսական իրավիճակի վատթարացման հետեւանքով: Այս մասին յայտարարած ԱՄՆ-ի պետական քարտուղարի Եւրոպայի ու Եւրասիայի հարցերով օգնականի տեղակալ էրիք Ռուպին:

«Մենք կը գիտակցինք, որ Ռուսաստանի տնտեսական դժուարութիւնները կ'ազդեն տարածաշրջանի միւս երկիրներուն վրայ եւ լրիւ համաձայն ենք, որ պէտք է աշխատինք այդ երկիրներու իշխանութիւններուն հետ, որպէսզի օգնենք յաղթահարելու տնտեսական դժուարութիւնները: Այդ պատժամիջոցներու նպատակը տարածաշրջանի այլ երկիրներուն պատճելը չէ, այնպէս որ, մենք անշուշտ կը փափաքինք աշխատիլ անոնց հետ եւ աջակցելու անոնց: Կը կարծեմ, մեր նոր դեսպանը Ռիչըրտ Միլս, Երեւանի մէջ նաեւ այս հարցն է որ պիտի քննարկէ ժամանելուն պէս», - ըսած Ռուպին:

Այն հարցին, թէ Ռուսաստանի մէջ տեղի ունեցող իրադարձութիւնները ինչպէ՞ս ազդած են տարածաշրջանին ներս Ամերիկայի քաղաքականութեան վրայ, Ռուպին պատասխանած է. «Տարա-



Ամերիկացի դիւանագետ Էրիք Ռուպին

ծաշրջանի երեք երկրներու նկատմամբ մեր քաղաքականութիւնը կը շարունակէ անփոփոխ մնալ Սովետական Միութեան փլուզումէն ի վեր: Մենք կ'աջակցինք այդ երկիրներու ինքնիշխանութեան, անկախութեան ու տարածքային ամբողջականութեան: Միեւնոյն ժամանակ՝ մենք կ'աջակցինք այդ երկիրներու տնտեսական աճի զարգացման, բարգաւաճման, ժողովրդավարութեան եւ թափանցիկ կառավարման եւ ազատ մամուլի ձեւաւորման: Միեւնոյն ժամանակ, մենք կը զարգացնենք մեր յարաբերութիւնները ոչ թէ ԱՄՆ-Ռուսաստան անհամաձայնութիւններու

Շաբ.ը էջ 4

«Ատրպէյճան Կ'արհամարիտ Միջազգային Հանրութեան Կոչերը»

Կ'ըստ Հայաստանի Արտաքին Գործոց Նախարարութիւնը

Հայաստանի Արտաքին Գործոց Նախարարութիւնը յայտարարեց, որ ժամանակն է սթափեցնելու հակառակորդ երկրին, աւելցնելով որ Ատրպէյճան կ'արհամարհէ ԵԱՀԿ Մինսկի խումբի, եւ ընդհանրապէս միջազգային հանրութեան կոչերը: Ատր փաստը ոչ միայն տարուայ սկիզբէն ի վեր նոր թափ առած սահմանային լարուածութիւնը եւ տանտակ գոհերն են, այլ նաեւ Միւնիխի մէջ Իլհամ Ալիեւի աղմկալից յայտարարութիւնները:

«Ի՞նչ կ'ընէ հայ գինուորը գրաւուած տարածքներու մէջ: Ի՞նչ կորսնցուցած է ան Աղտամի մէջ, եթէ չուզեր մեռնիլ, թող չերթայ Աղտամ: Թող մնայ իր Երեւանի, Գիւմրիի, իր երկրին մէջ: Դուք ձեզ համար բաւականաչափ տարածքներ ունիք ձեր երկրին մէջ, ուր, իմիջիայլոց, այդքան ալ մարդ չէ մնացած, եւ

ուրեմն ի՞նչ կ'ընէք Աղտամի մէջ, ի՞նչ կ'ընէք Ֆիզուլիի մէջ», - ըսած է Ալիեւ:

«Միւնիխի անվտանգութեան համաժողովին Ատրպէյճանի նախագահի արտայայտած գաղափարները եւ դիրքորոշումները յստակ վկայում են, որ միջազգային հանրութեան կոչերի նկատմամբ նա արհամարհական վերաբերմունք ունի եւ շարունակում է առաւելապաշտական գիծը: Մենք նորից ենք գտնում, որ ժամանակն է Ատրպէյճանին սթափեցնելու», - «Ազատութիւն» ռատիոկայանին հետ գրոյցի ընթացքին ըսաւ Հայաստանի Արտաքին Գործոց Նախարարութեան խօսնակ Տիգրան Բալայեան:

Հայկական կողմը կը շեշտէ, որ Միւնիխի անվտանգութեան խորհրդաժողովին, Ալիեւ ըստ էութեան,

Շաբ.ը էջ 4

Ընկ. Յակոբ Տիգրանեան.

«Ապրիլ 24-ը Հեռու Պահենք Ներքաղաքական Հարցերէն»



ՄԳՀԿ Կեդրոնական Վարչութեան ատեսպետ՝ Ընկ. Յակոբ Տիգրանեան մամուլայաւելուի սի ընթացքին

Ուրբաթ, 6 Փետրուար 2015-ին կուսակցութեան Երեւանի կեդրոնատեղիին մէջ ՄԳՀԿ Կեդրոնական Վարչութեան ատեսպետ՝ Ընկ. Յակոբ Տիգրանեան հրաւիրած էր մամուլի ասուլիսի մը: Ատենապետ ընկերը հանդէս եկաւ հակիրճ խօսքով եւ ներկայացուց կուսակցութեան Հայաստանակեդրոն ըլլալու առած նախկին որոշումները եւ վերջերս կեդրոնական գրասենեակին Երեւան հաստատուելու հանգամանքները: Այս առումով Ընկ. Յակոբ Տիգրանեան ըսաւ. «Հնչակեան կուսակցութեան 2009 թուականին տեղի ունեցած 19-րդ համագումարը որոշում կայացուց դառնալ Հայաստանակեդրոն: 4 տարի ետք 20-րդ համագումարի ընթացքին՝ 2013-ի Սեպտեմբերին, այդ որոշումը վերահաստատուեցաւ: Անկէ ետք, նորընտիր կեդրոնական վարչութիւնը ուժի մէջ դնելով նախօրօք առնուած որոշումը՝ Սփիւռքէն Հայաստան տեղափոխեց Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան կեդրոնը: Այսօր արդէն իրականութիւն դարձած է այդ որոշումը, մեր կեդրոնը օժտուած է Երեւանի մէջ իր գրասենեակով եւ ես՝ որպէս ատեսպետ, կուսակցութեանս խոնարհ ծառան, տեղափոխուած եմ Հայաստան»: Ընկ. Տիգրանեան, հայրենի մամուլն ու լրատուական միջոցները իրազեկելու համար կուսակցութեան ընդ-

քին՝ 2013-ի Սեպտեմբերին, այդ որոշումը վերահաստատուեցաւ: Անկէ ետք, նորընտիր կեդրոնական վարչութիւնը ուժի մէջ դնելով նախօրօք առնուած որոշումը՝ Սփիւռքէն Հայաստան տեղափոխեց Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան կեդրոնը: Այսօր արդէն իրականութիւն դարձած է այդ որոշումը, մեր կեդրոնը օժտուած է Երեւանի մէջ իր գրասենեակով եւ ես՝ որպէս ատեսպետ, կուսակցութեանս խոնարհ ծառան, տեղափոխուած եմ Հայաստան»: Ընկ. Տիգրանեան, հայրենի մամուլն ու լրատուական միջոցները իրազեկելու համար կուսակցութեան ընդ-

Շաբ.ը էջ 6

Թուրքիոյ Նախագահը Դարձեալ Երկխօսութեան Կոչ Կ'ընէ Հայաստանին

Թուրքիոյ նախագահ Ռեջէփ Էրտողան Հայաստանին կոչ ըրած է 1915 թուականի դէպքերու ուսումնասիրութիւնը քաղաքական հարթութենէն տեղափոխել պատմագիտութեան դաշտ: «Այն, ինչ 100 տարի առաջ կատարած են հայերը թուրքերու դէմ, իսկ թուրքերը հայերու դէմ, պատշաճ ձեւով չէ քննարկուած», - ըսած է ան:

«Անատոլու» գործակալութեան համաձայն, Գոլումպիա կատարած իր այցելութեան ընթացքին Էրտողան հայկական հարցերու մասին խօսած է, ելոյթ ունենալով Պոկոտայի «Էքստեմադօ» համալսարանի եւ Անգարայի համալսարանի միատեղ կազմակերպած գիտաժողովի ընթացքին:

«Մենք ջանքեր թափեցինք բարելաւելու յարաբերութիւնները Հայաստանի հետ եւ նոր էջ բանալու, բայց դժնախտաբար իսրայէլական մեր ձեռքը միշտ կը մերժուի հայկական ազդեցիկ սփիւռքի կողմէ», - ըսած է Էրտողան՝ աւելցնելով. «Այս տարի 100-րդ տարելիցն է: Մենք կը վերահաստատենք մեր անկեղծ առա-

ջարկները»: «1915 թուականի դէպքերուն հետ կապուած մենք չենք դադարեցնել խաղաղութեան եւ երկխօսութեան մեր ջանքերը», - Գոլումպիայի մէջ յայտարարած է Թուրքիոյ նախագահը:

Էրտողան շրջազայութեան ելած է դէպի Լատինական Ամերիկա, Գոլումպիայէն անցնելով Գոլապա:

Միւս կողմէ, Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Մեւլուտ Չաւուշօղլու յայտարարեց, որ Թուրքիա բազմաթիւ կառուցներու հետ կ'աշխատի՝ պայքարելու համար Հայոց ցեղասպանութեան ճանաչումին դէմ: Լրագրողներու հետ գրոյցի մը ընթացքին նախարարը անդրադարձաւ Յեղասպանութեան հարցով թրքական քայլերուն: Ան նշեց, որ արտաքին գործոց նախարարութիւնը կը ներկայացնէ «հայկական պնդումներուն դէմ թրքական թէզերը»:

«Այս աշխատանքին մէջ ներգրուած ենք հասարակական կազմակերպութիւնները եւ գիտնականները», ըսաւ Չաւուշօղլու:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Յովիկ Աբրահամեանը լուանում է ձեռքերը

ԵՂԻԱԶԱՐ ԱՅՆԹԱՊՑԻ

ԲՀԿ-ական ակտիվիստի հանդէպ բռնարարքին «ստեղծուած իրադրութեանը անդրադարձել է վարչապետ Յովիկ Աբրահամեանը», որը պատասխանել է tert.am-ի հարցին:

Աբրահամեանի յայտարարութիւնն իր տօնաճառութեամբ չափազանց ուշագրաւ է, «Ըստ հուլիսեան նրա արձագանքը հանդիսանում է ԲՀԿ-ի յայտարարութեան հակադարձում, որ տարածել էր կուսակցութիւնը Արտակ խաչատրեանի հանդէպ բռնութիւնից յետոյ: Յովիկ Աբրահամեանը բաւական կոշտ է արձագանքել ԲՀԿ-ի յայտարարութեանը՝ կիրառելով շատ սուր բնութագրականներ «Գազիկ Ծառուկեանին յայտարարելով, որ նա անձնական պատասխանատուութիւն է կրում էմոցիոնալ յայտարարութիւններ համար, որ թոյլ կը տան նրա կուսակիցները ստեղծուած իրավիճակի մասով:

Յովիկ Աբրահամեանի նմանօրինակ արձագանքը, սակայն, աւելի շատ հետաքրքրական է ոչ թէ գուտ տօնաճառութեան առումով, այլ որ դա արտայայտողը հենց Յովիկ Աբրահամեանն է, այսինքն՝ մարդ, որը իշխանական համակարգում ընկալւում է ինչ-որ առումով ԲՀԿ դեպքան նաեւ, կամ նուազագոյնը՝ կամուրջ՝ ՀՀԿ-ի եւ ԲՀԿ-ի միջեւ:

Աւելին՝ ակնյայտ է վերջին շրջանում, առնուազն Ապրիլից ի վեր ԲՀԿ-ի գործողութիւններում, որ դրանք որպէս առաջնային ուղղութիւններուց մէկը դիտարկուած են Յովիկ Աբրահամեանի վարչապետական անձեռնմխելիութեան ապահովումը:

Եւ ահա այս պայմաններում հնչում է Յովիկ Աբրահամեանի կոշտ արձագանքը, որը ինչ-որ առումով նաեւ կարող է ընկալուել որպէս Գազիկ Ծառուկեանի վրայ պատասխանատուութեան կենտրոնացում ոչ միայն, այսպէս ասած, աւանսով, այլ նաեւ ըստ հուլիսեան՝ «ապառիկով», այն իմաստով, որ Յովիկ Աբրահամեանը կարծես թէ ակնարկում է, որ Ծառուկեանն է իրավիճակի լարման պատասխանատուն:

Աբրահամեանի անհանգստութեան պատճառները կարծես թէ բաւական տեսանելի են: Նրա վարչապետութիւնն այն գինն է, որ վճարուած է ՀՀԿ-ԲՀԿ, այսպէս ասած,

չափաւոր հակադրութեան համար: Եթէ այդ հակադրութիւնը սրուի, ապա գրեթէ անկասկած է, որ առաջին գոհը լինելու է Յովիկ Աբրահամեանը: Այսինքն՝ այսօր նրան պահող ԲՀԿ-ն կտրուկ կամ արմատական քայլերի դէպքում Յովիկ Աբրահամեանին կը դարձնի առաջին թիրախը:

Այս տեսանկիւնից, իհարկէ, Աբրահամեանը շահագրգռուած չէ ԲՀԿ-ի որեւէ կտրուկ գործողութեամբ, եւ առաջին անգամ չէ, երբ նա ըստ հուլիսեան արձագանքում է ԲՀԿ-ում նման տրամադրութիւնների սրացումներին: Ակնյայտ է դառնում եւս մէկ անգամ, որ ԲՀԿ-ի յաղթանակ դիտող Յովիկ Աբրահամեանի վարչապետացումը ըստ հուլիսեան վերածուել է արդէն ԲՀԿ-ի արգելակի, ինչը գործարկուած է հերթական անգամ:

Ըստ որում, Յովիկ Աբրահամեանի յայտարարութիւնը նաեւ ակնյայտօրէն ունի վերջնագրային տօնաճառութիւն, ինչը արտայայտուած է ԲՀԿ-ից դուրս եկած կարծիքների հարցում Գազիկ Ծառուկեանի անձնական պատասխանատուութիւնը հռչակելով:

Սակայն հետաքրքրութիւն է ներկայացնում այն, թէ որն է վերջնագրային այդ յայտարարութեան պայմանը: Ասել կ'ուզի՞ Յովիկ Աբրահամեանը Ծառուկեանի պատասխանատուութիւնն է մատնացոյց անում իր ձեռքերը լուանալու առումով, սակայն ինչ կոնտեքստում՝ ահա, թէ որն է հարցը: Յովիկ Աբրահամեանը, խաղաղով ՀՀԿ-ի եւ ԲՀԿ-ի մէջտեղում, ոչ միայն միաւորներ էր փորձում հաւաքել ՀՀԿ-ին ԲՀԿ-ի արմատական քայլերից երաշխաւորելով, այլեւ գուցէ թէ նաեւ երաշխաւորելով ԲՀԿ-ին ՀՀԿ-ի արմատական քայլերից:

Այսպիսով՝ ըստ հուլիսեան ստացում է, որ նա սպառնում է դուրս գալ մէջտեղից, բայց պատասխանատուութիւնը դնում է Գազիկ Ծառուկեանի վրայ՝ սրանով իսկ երեւի թէ ակնարկելով, որ այլեւս արմատական քայլերի դէպքում չի երաշխաւորի ԲՀԿ-ն ՀՀԿ-ի հարուածներից:

Հարց է առաջանում՝ իսկ ՀՀԿն նրա երաշխիքների կարիքը չունի՞, թէ՞ հենց այդ հարցի պատասխանն էլ Յովիկ Աբրահամեանին ստիպել է Ծառուկեանի անձնական պատասխանատուութեան մասին խօսել:

«ԺԱՄԱՆԱԿ ԵՐԵՒԱՆ»

Մշուշոտ կարգախօս

ԱՐԱՄ ԱՐԱՀԱՄԵԱՆ

Ես, ճիշտն ասած, լաւ չեմ հասկանում, թէ ի՞նչ է նշանակում «100-ամեակն՝ առանց ռեժիմի»: Նախ՝ ռեժիմ բառը փոքր-ինչ ազատ է մեկնաբանուած: Ընդդիմադիրները յատուկ բացասական շեշտով են ասում՝ «ռեժիմը այս արեց», «ռեժիմը այն է ուզում»: Մինչդեռ «ռեժիմը» միանգամայն չէզոք բառ է եւ նշանակում է «քաղաքական համակարգ»: Կարծես թէ խօսքը ոչ թէ ընդհանրապէս քաղաքական համակարգի, այլ ա՛յս համակարգի մասին է: Եւ հետեւաբար ընդդիմութեան նպատակը պէտք է որ լինի Հայաստանի այսօրուայ՝ մեղմ աւտորիտար համակարգը աստիճանաբար վերածել ժողովրդավարական համակարգի: Դրա անհրաժեշտութեան հետ դժուար թէ որեւէ խելամիտ մարդ վիճի՞ դա Հայաստանի զարգացման միակ հնարաւոր ճանապարհն է: Արդեօք դա՞ է ուզում Հիմնադիր Խորհրդարանը: Դժուար թէ: Աւելի հաւանական է, որ մնացած ընդդիմադիրների նման նրանք «ռեժիմի» տակ հասկանում են Սերժ Սարգսեանին: Բայց քանի որ հիմնադիր Խորհրդարանականները, ըստ երեւոյթին, ցանկանում են իշխանութիւն փոխել նաեւ ԼՂՀ-ում, ապա շարժումն աւելի ճիշտ կը լինէր անուանել՝ «100-ամեակն՝ առանց ռեժիմների»:

Հիմա բուն 100-ամեակի մասին: Խօսքը, պէտք է ենթադրել, Հայոց ցեղասպանութեան 100-ամեակի մասին է, որը լրանալու է այս տարուայ Ապրիլի 24-ին: Հետեւաբար, եթէ վերծանենք մշուշոտ կարգախօսը եւ փորձենք այն վերածել աւելի հասկանալի լեզուի, ապա դա գուցէ նշանակում է՝ «Այնպէս անենք, որ մինչեւ 2015 թուականի Ապրիլի 24-ը Հայաստանը ղեկավարի ոչ թէ Սերժ Սարգսեանը, այլ ուրիշ նախագահ»: Հաւանական է, սակայն, որ

ների առաջարկած դարաբաղեան կարգաւորման սկզբունքներից, որոնք նախատեսում են Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրաւունքի ճանաչումը:

Սակայն, այդ դէպքում ինչի՞ հիման վրայ պէտք է տեղի ունենայ կարգաւորումը: Ալիւելի կարծիքով, ռեժիմի հաւասարակշռութեան փոփոխութեան հիմքի վրայ: Ատրպէյճանը, սահմանների վնաս հասցնելու «կաթիլային» մարտավարութիւն կիրառելով, փորձում է Հայաստանին ստիպել գիշումների գնալ: Աւելի ճիշտ, ոչ այնքան Հայաստանին, որքան այն երկրներին, որոնց ձեռնտու է ներկայիս ստատուս-քոնոն: Չի բացառում նաեւ, որ Ատրպէյճանը փորձում է Հայաստանին ստիպել դիմել այն երկրների ռազմական օգնութեանը, որոնց Ղարաբաղում յայտնուելու ձեռնտու է Պաքուին:

Ատրպէյճանը, սակայն, դաշնակիցներ չունի, ամէն դէպքում, Միւնխենում չկային, առաւել եւս, որ Թուրքիայի ԱԳ նախարարը լքել է Միւնխենն իսրայէլի պատուիրակութեան ներկայութեան պատճառով: Ալիւելը Միւնխենում փորձել է այլ երկրներին համոզել պնդել Ատրպէյճանի տարած քային ամբողջականութիւնը, ինչպէս Ուկրաինայի դէպքում, սակայն Ատր-

դա նշանակում է՝ «2015 թուականի Ապրիլի 24-ին իրականացնենք յեղափոխութիւն եւ փոխենք նախագահին»: Արձանագրենք, որ ներքին քաղաքական պայքարն Ապրիլի 24-ի հետ, թէկուզ ժամկէտային առումով, կապելը անկախ Հայաստանի ընդդիմութեան պրակտիկայում ընդունուած չէ: (Ի դէպ, ընդունուած չէր նաեւ Հայաստանի ընդդիմութեան հանրահաւաքներն ու ցույցերը անցկացնել Արցախում): Ընդհակառակը՝ 88-ի Ապրիլի 24-ից սկսած՝ ընդդիմութիւնը (այն ժամանակ՝ «Ղարաբաղ» կոմիտէն) կոչ էր անում այդ օրը յարգել անմեղ զոհերի յիշատակը լուռ եւ արժանապատիւ: Ընդդիմութեան նման կեցուածքի մէջ ես խորը իմաստ եմ տեսնում՝ այդ օրը մենք բոլորս հանդէս ենք գալիս ոչ թէ որպէս այս կամ այն քաղաքական հոսանքի ներկայացուցիչներ, այլ պարզապէս որպէս հայեր:

Անձամբ ժիրալը Սեֆիրեանի անկեղծութեանն ու հայրենասիրութեանը ես, իհարկէ, չեմ կասկածում: Նրա կողքին կան յղուած մտաւորականներ, որոնք պատիւ կը բերեն ցանկացած կուսակցութեան: Կան նաեւ կասկածելի անձնաւորութիւններ, որոնք պղտոր ջրում ձուկ են բռնում: Բայց ինչի՞նք դա չէ: Խնդիրն, ինձ թւում է, Հիմնադիր Խորհրդարանի մեթոդոլոգիական սխալի մէջ է, երբ այդ խումբը հրաժարուած է հանդէս գալ որպէս քաղաքական ուժ, որպէս կուսակցութիւն՝ հնչեցնելով, սակայն, ըստ հուլիսեան, քաղաքական կարգախօսներ: Նման երկուութիւնը անխուսափելիօրէն սխալների է յանգեցնում:

«ԱՌԱԻՕՏ»

Ալիւելը հաստատեց, որ պատերազմ է յայտարարել

ՆԱՅԻՐԱ ՀԱՅՐՈՒՄԵԱՆ

Միւնխենում «Ուկրաինայից բացի. Եւրոպայի չկարգաւորուած հակամարտութիւնները» թեմայով անվտանգութեան համաժողովի ժամանակ Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիւելը մի քանի «խոստովանական» յայտարարութիւն է արել:

Նախ, նա խոստովանել է, որ հենց Ատրպէյճանն է Հայաստանի հետ սահմանին լարուածութիւն ստեղծում: Որպէս ռազմական գործողութիւնների դադարեցման նախապայման՝ նա նշել է «Ղարաբաղի շուրջ տարած քննիքի» յանձնումը, որից յետոյ, նրա խօսքով, հրադադար կը լինի: Դա նշանա-

կում է, որ Ատրպէյճանը բացայայտ լարում է դրութիւնը սահմանին, որպէսզի հասնի գոնէ մէկ շրջանի յանձնմանը: Սակայն այդ մօտեցումը Թուրքիայից բացի ոչ ոք չի ընդունում:

Ալիւելը նշել է նաեւ, որ պատրաստ է «յանձնման» ի պատասխան իր տարածքով բացել Հայաստանից Ռուսաստան երկաթուղին եւ «թոյլ տալ» Թուրքիային ապաշրջափակել հայ-թուրքական սահմանը: Իսկ Ղարաբաղի համար (ԼՂԻՄ սահմաններում) միայն ինքնավարութիւն է առաջարկել:

Միւնխենի համաժողովում ելույթի ժամանակ Ալիւելը փաստացի հրաժարուել է համանախագահ-

Շաբ.բ էջ 5

ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Մրջանի
ԽՄԲԱԳԻՐ
SOPH. UNCALY GALVANISED
ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ
MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$80.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վարչապետ. «Սրացումների Պատասխանատուությունը Մնալու է Ծառուկեանի Վրայ»

Կասեցում» նախաձեռնությունն ակտիվիստ, «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան անդամ Արտակ խաչատրեանի առեւանգման եւ անյայտ անձանց կողմից ծեծի ենթարկուելու վերաբերեալ յայտարարութիւններին անդրադառնալով՝ ՀՀ վարչապետ Յովիկ Աբրահամեանը Tert.am -ի հետ զրոյցում ասաց, որ ինքն ակնկալում է, որ Գազիկ Ծառուկեանն անձամբ պէտք է հետեւի իր քաղաքական կառուցից դուրս եկող յայտարարութիւններին, այլ չապէս «դրանցում տեղ գտած էմոցիոնալ անհեթեթութիւնները մենք ստիպուած պէտք է ընկալենք որպէս իր անձնական կարծիք»:



ՀՀ վարչապետ Յովիկ Աբրահամեան

«Նախ մեր կուսակցութիւնը խստորեն դատապարտել է կատարուած բռնութիւնը: Մենք դատապարտել ու դատապարտելու ենք հարցերը բռնուցքով լուծելու ցանկացած փորձ: Սա միանշանակ է, եւ սրա վերաբերեալ ցանկացած շահարկում անձամբ ես համարում եմ քաղաքական թուլամորթութիւն, ում կողմից էլ որ այն արուի:

Սա մէկ: Երկրորդ՝ մենք ակնկալում ենք իրաւապահների արդիւնաւէտ ու համակողմանի աշխատանք: Ով էլ լինի միջադէպի պատուիրատուն կամ կազմակերպիչը, պէտք է բացառապէս եւ պատասխան տա օրէնքի առաջ:

Երրորդ՝ ԲՀԿ-ի կողմից տարածուած յայտարարութիւնը ես համարում եմ շտապողական եւ կոպիտ սխալ, որն ուղղակի անընդունելի է: Ես ակնկալում եմ, որ Գազիկ Ծառուկեանն անձամբ պէտք է հետեւի իր քաղաքական կառուցից դուրս եկող յայտարարութիւններին, կամ դրանցում տեղ գտած էմոցիոնալ անհեթեթութիւնները մենք ստիպուած պէտք է ընկալենք որպէս իր անձնական կարծիք: Այդ դէպքում, նման անպատասխանատու յայտարարութիւններից բխող հնարաւոր զարգացումների ու սրացումների ողջ քաղաքական պատասխանատուութիւնը մնալու է անձամբ Գազիկ Ծառուկեանի վրայ»:

Աւելի վաղ NEWS.am-ը հարցրել էր, որ Յունուարի 7-ին՝ ժամը 19:00-ի մօտ, Արտակ խաչատրեանին «Շտապօգնութեան» մեքենայով տեղափոխել էին հիւանդանոց: Դրանից մօտ 40 րոպէս առեւանգման մասին առաւօտեան լուր էր տարածուել, եղբոր խօսքով, «ծեծուած ջարդուած, կիսազիտակից վիճակում» թողել էին նրա բնակարանի առջեւ ու հեռացել:

Աւելի վաղ NEWS.am-ը հարցրել էր, որ Յունուարի 7-ին՝ ժամը 19:00-ի մօտ, Արտակ խաչատրեանին «Շտապօգնութեան» մեքենայով տեղափոխել էին հիւանդանոց: Դրանից մօտ 40 րոպէս առեւանգման մասին առաւօտեան լուր էր տարածուել, եղբոր խօսքով, «ծեծուած ջարդուած, կիսազիտակից վիճակում» թողել էին նրա բնակարանի առջեւ ու հեռացել:

Սէֆիլեան. «Լաւ էինք Անում, Որ Գնում էինք Ուելի Ենք Գնալու»

«Լեոնային Ղարաբաղի իշխանութիւնները խոչընդոտեցին «Հիմնադիր Խորհրդարանի» ավտոերթը դէպի Ստեփանակերտ, քանի որ առաւել կարեւորում են արգելել Սերժ Սարգսեանին քննադատողների մուտքը, քան Ղարաբաղի միջազգային հեղինակութիւնը», - փետրուար 11-ին հրատարակած ասուլիսում յայտարարեց «Հիմնադիր Խորհրդարանի» քարտուղարութեան համակարգող Ժիրայր Սէֆիլեանը:



«Հիմնադիր Խորհրդարանի» համակարգող Ժիրայր Սէֆիլեան

«Այս քսան տարիների ընթացքում մեզ չի յաջողուել պետութիւն ստեղծել, եւ այսօր կառավարման դեկլին մօտ գտնուող մարդիկ այնպիսի մարդիկ են, որոնք պետական չինովնիկ կոչուելուց հազար կիլոմետր հեռու են: Աւելի շատ այդ մարդիկ առաջնորդում են գողական արժէքներով: Այսինքն, նրանք այդ տարածքը նայողներն են, այդ գոնը նայողներն են նրանք: Յանկարծ յայտնուում է մի ուժ, որ ուզում է մտնել այդ տարածք եւ իրենց տարածքում իրենց շէֆին փչացնի», - յայտարարեց նա:

«Այս քսան տարիների ընթացքում մեզ չի յաջողուել պետութիւն ստեղծել, եւ այսօր կառավարման դեկլին մօտ գտնուող մարդիկ այնպիսի մարդիկ են, որոնք պետական չինովնիկ կոչուելուց հազար կիլոմետր հեռու են: Աւելի շատ այդ մարդիկ առաջնորդում են գողական արժէքներով: Այսինքն, նրանք այդ տարածքը նայողներն են, այդ գոնը նայողներն են նրանք: Յանկարծ յայտնուում է մի ուժ, որ ուզում է մտնել այդ տարածք եւ իրենց տարածքում իրենց շէֆին փչացնի», - յայտարարեց նա:

Սէֆիլեանը պնդեց, որ իրենց կողմից սադրանք չի եղել. - «Եթէ նման բաներ են ասում, թող հրապարակեն իրենց մօտ եղած տեսանիւթերը»:

«Ինչ վերաբերում է, թէ Ղարաբաղում ճակատ է, ամբողջ Հայաստանն է ճակատ: Երեւանը աւելի մօտ է սահմանին, քան Բերձորը: Այսօր Նախիջևեանից հանգիստ կարող են «Սմբէրով» ուժակոծել Երեւանը», - ասաց զարաբաղեան պատերազմի ժամանակ Շուշիի առանձնակի գումարտակը ղեկավարած Սէֆիլեանը եւ շարունակեց. - «Ինչ վերաբերում է, թէ ինչու էինք գնում, լաւ էինք անում, որ գնում էինք: Ու էլի ենք գնալու: Ոչ ոք մեզ չի կարող իր կամքը թելադրել: Մենք ենք որոշում ինչ անենք»:

Ժիրայր Սէֆիլեանը վստահեցրեց, որ «Հարիւրամեակն առանց ռեժիմի» նախաձեռնութիւնը Ապրիլի 24-ին անցկացնելու է այնպիսի ակցիաներ, որոնք չեն խաթարելու Հայաստանում նախատեսուած որեւէ միջոցառում: Ինչ վերաբերում է ոչ-իշխանական եռեակի հետ համագործակցութեանը, ասաց. - «Այդ կեղծ ընդդիմութեան պրոցեսից մենք շուտուանից դուրս ենք եւ երբեք այդ կեղծ գործուկութեամբ զբաղուողը չենք»:

Ա. Մարտիրոսեան «Ծառուկեան-Տէր-Պետրոսեան-Յովհաննիսեան Հանդիպման Յստակ Օրակարգ Այս Պահին Չկայ»:

Ազգային ժողովի ոչ իշխանական ուժերի առաջնորդների՝ Գազիկ Ծառուկեան-Լեւոն Տէր Պետրոսեան-Բաֆֆի Յովհաննիսեան՝ փետրուարի 15-ի հանդիպման յստակ օրակարգ այս պահին չկայ: Այս մասին Tert.am-ին յայտնեց «Ժառանգութիւն» կուսակցութեան փոխնախագահ Արմէն Մարտիրոսեանը:



«Ժառանգութիւն» կուսակցութեան փոխնախագահ Արմէն Մարտիրոսեան

«Օրակարգը ազատ է, պարզ է, որ իւրաքանչիւր առաջնորդ ազատ է տարբեր հարցեր դնելու, եւ յստակ օրակարգ այս պահին, այսպէս ասեմ, չկայ», - ասաց Արմէն Մարտիրոսեանը՝ նշելով, որ հանդիպմանը շարժման լիդերութեան հարց չի քննարկուել:

Ի պատասխան դիտարկման, որ եթէ Լեւոն Տէր-Պետրոսեանը հոկտեմբերեան հանրահաւաքներից մէկի ժամանակ յայտարարել էր, որ իշխանութիւններին ներկայացուած 12 կէտերի անցկացման ժամկէտն այլեւս աւարտուած է, ուստի առջեւում միայն քաղաքական գործընթացներ են, ապա Ծառուկեանն իր խորհրդաժողովին շեշտադրեց, որ 12 կէտերից հետ չեն կանգնելու, հետեւաբար, ո՞րն է այդ հանդիպման համար ինչ-որ ելման կէտը եւ որը կը լինի տրամաբանական, Արմէն Մարտիրոսեանը նկատեց. «Տրամաբանականը՝ երեք առաջնորդները կը նստեն, կը քննարկեն, կ'որոշեն»:

Նա նաեւ խորհուրդ տուեց ժամանակից առաջ չընկնեն:

«Եւ չեմ կարծում, որ որեւէ մէկն այս պահին կարող է ասել, թէ ինչ են քննարկելու, ինչ են որոշելու», - աւելացրեց Արմէն Մարտիրոսեանը, որովհետեւ ազատ օրակարգով քննարկում է լինելու: Իրոսեանը: Ըստ նրա՝ այդ հանդիպմանը

անունը որոշելը լրատուամիջոցի իրաւունքն է՝ ի պատասխան հարցի, թէ այն «թեժ գարնան» շրջանակներում է:

Իսկ թէ հանդիպման անհրաժեշտութիւնն ինչո՞ւ առաջացաւ տեւական դադարից յետոյ, Արմէն Մարտիրոսեանն ասաց. «Պետք է ընդհանուր քննարկումներ անեն եւ որոշեն, թէ ինչ քայլեր է անհրաժեշտ իրականացնել, որովհետեւ հենց Ձեր իսկ նշած դադարի փաստն ասում է, որ պէտք է քննարկուեն առկա խնդիրները»:

«Ժառանգութեան» ներկայացուցիչը նկատեց նաեւ, որ չի կարծում, թէ «Կասեցում» նախաձեռնութեան անդամ, ԲՀԿ-ական Արտակ խաչատրեանի առեւանգումն ու ծեծն են երեք կուսակցութիւնների քաղաքական ակտիւացման պատճառ դարձել:

Դա, ըստ նրա, միայն առիթ կարող է լինել, քանի որ մինչեւ այդ էլ ակնյայտ էր, որ ակտիւացումը հասունանում է:

Բակո Սահակեան Բերձորի Դէպքերի Հետ Կապուած Մեղաւորները Կը Պատժուեն

Բերձորում տեղի ունեցած աղմկոտ իրադարձութիւններից յետոյ Ստեփանակերտ գործուղուած հայաստանցի պատգամաւորները Լեոնային Ղարաբաղի նախագահ Բակո Սահակեանի եւ Ազգային ժողովի նախագահ Աշոտ Ղուլեանի հետ քննարկել են տեղի ունեցած դէպքերը: Բակո Սահակեանը հայաստանցի պատգամաւորներին հաւաստիացրել է, որ ընթացում է ծառայողական քննութիւն եւ մեղաւորները կը պատժուեն:

Ղարաբաղի Ազգային ժողովի պաշտօնական կայքէջի համաձայն, Աշոտ Ղուլեանի հետ հանդիպման ժամանակ քննարկուել է Լեոնային Ղարաբաղի Հանրապետութեան եւ Աղբբջանի շփման գծի երկայնքով լարուածութեան աճի հետեւանքով ստեղծուած իրավիճակը: Հանդիպմանը քննարկուել է նաեւ Բերձորում նախախորհրդարանի ավտոերթի մասնակիցների նկատմամբ գործադրուած բռնութիւնների հարցը:

«Օրէնսդիրներն ընդգծել են նման իրավիճակներում խնդիրներն օրէնսդրութեան շրջանակներում կարգաւորելու անհրաժեշտութիւնը», - ասուած է Լեոնային Ղարաբաղի խորհրդարանի պաշտօնական կայքէջում:

«Գազիկ Ծառուկեանը Իշխանութեան Պահեստային Խաղացողն է»: Տ. Խզմալեան

«ԲՀԿ խորհրդաժողովը մի շարք հարցերի յստակ պատասխան տուեց», - համոզուած է «Ազգային Անվտանգութիւն» կուսակցութեան նախագահ Գառնիկ Իսագուլեանը: Նրա կարծիքով՝ ԲՀԿ-ն Գազիկ Ծառուկեանի գլխավորութեամբ ուժ է, որը այժմ պէտք է Հայաստանին. «Գազիկ Ծառուկեանը չի ձգտում տեղ գրաւել իշխանական բուրգում: Նա ուղղակի տեսաւ, թէ ինչ վատ է ապրում իր հարեւանը՝ Հայաստանի քաղաքացին, եւ գիտակցուած, կամոյքի եկաւ քաղաքական դաշտ»:

Կինտոեթիսոր Տիգրան Խզմալեանը չի կիսում պարոն Իսագուլեանի տեսակէտ: Նա աւելի քան համոզուած է, որ Գազիկ Ծառուկեանը պահեստային խաղացող է. «Սերժ Սարգսեանը վարկաբեկուած է եւ նրան փոխարինող են ման գալիս: Գազիկ Ծառուկեանը հենց այդ փոխարինողն է, որը երբեք էլ չի յայտարարել, որ ինքը ընդդիմութիւն է: Եկէք չմոռանանք, որ Գազիկ Ծառուկեանը կապեր ունի Ռոբերտ Քոչարեանի հետ, ով Պուտինի աշխատակիցն է»:

ԼՈՒՐԵՐ

Նախագահը Խորհրդակցութիւն է Արել 100-րդ Տարելիցի Միջոցառումների Վերաբերեալ



100-ամեակի միջոցառումներու նախապատրաստական աշխատանքներու մասնակիցները Նախագահական Պալատէն ներս

Նախագահի նստավայրում տեղի է ունեցել խորհրդակցութիւն՝ նուիրուած Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցի միջոցառումների նախապատրաստական աշխատանքների ընթացքին: ՀՀ պետական մարմինների ղեկավար անձնակազմի մասնակցութեամբ հրաւիրուած խորհրդակցութիւնը վարել է Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցին նուիրուած միջոցառումները համակարգող պետական յանձնաժողովի նախագահ, ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանը: Խորհրդակցութեան մասնակիցներին ներկայացուել են միջոցառումների ծրագիրը, դրա շրջանակներում «Յիշում եմ եւ պահանջում» կարգախօսի ներքոյ Հայաստանում եւ արտերկրում անցկացուելիք բազմաթիւ ու բազմաբնոյթ միջոցառումների ժամանակացուցը, ինչպէս նաեւ ծրագրի՝ բարձր մակարդակով իրականացման գործում պետական մարմինների մասնակցութեանը վերաբերող հարցեր: Զեկույցով հանդէս է եկել Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցին նուիրուած միջոցառումները համակարգող, ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավար Վիգէն Սարգսեանը:

Հայոց Ցեղասպանութիւնը Ժխտող Նոր Գիրքը Զօնել Են Էրդողանին

Թուրքիայում Հայոց ցեղասպանութիւնը ժխտող հերթական գիրքն է լոյս տեսել, որը հեղինակը ձօնել է Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանին: Թուրքական «Միլլիէթի» փոխանցմամբ՝ պատմութեան վերաբերեալ ստեղծագործութիւններով յայտնի թուրք գրող Քադիր Մըսըօղլուն հրատարակել է «Պատմութիւնից մինչ մեր օրերը Հայկական հարցը եւ բռնութիւնները» գիրքը: Գիրքը կազմուած է 7 գլխից, որոնց ժամանակագրութիւնը հասնում է մինչեւ Արցախի հարցը եւ Խոջալուի իրադարձութիւնները: Թուրք հեղինակը փորձում է պնդել, թէ 1915-ին ոչ թէ ցեղասպանութիւն է տեղի ունեցել, այլ փոխադարձ հարուածներ են եղել՝ առաջինը յարձակման մէջ մեղադրելով



հայերին: Հեղինակը գիրքը ձօնել է Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանին:

Ատրպէյճան Կ'արհամարիէ

Շարունակուած էջ 1-էն հրաժարած է ընդունիլ միջնորդներու կողմէ առաջարկուած միջազգային իրաւունքի յայտնի երեք սկզբունքները: Նոյնանման սպառնալից յայտարարութեամբ հանդէս եկած է նաեւ Ատրպէյճանի Պաշտպանութեան Նախարարութիւնը՝ յայտարարելով, որ պատերազմը իրենց համար դեռ աւարտած չէ եւ այն կը շարունակուի այնքան ժամանակ, քանի դեռ, «հայկական գրաւող ուժերը դուրս չեն բերուած գրաւուած տարածքներէն»: Քաղաքագէտ Ստեփան Սաֆարեան կարծիքով՝ Ատրպէյճանի պաշտպանական գերատեսչութեան

եւ Ալիեւի ռազմատենչ յայտարարութիւնները չէին ըլլար, եթէ Հայաստանը հակառակորդի սթափեցման հարցով յոյսը չդնէր միայն միջազգային արձագանգի վրայ: Քաղաքագէտի խօսքով, իշխանութեան դիւանագիտական անգործութիւնը հակառակորդին անպատժելիութեան զգացողութիւն կու տայ: «Իհնամ Ալիեւի ռազմատենչ յայտարարութիւնները, սպառնալից յայտարարութիւնները նշանակում են, որ մենք դեռեւս կունենանք լարուածութեան յաջորդ պարոյրը առաջիկայում», - ըսաւ Սաֆարեան: Ան կարծիք յայտնեց, որ շփման գծի լարուածութեամբ Ալիեւ կը փորձէ փոխել ԵԱՀԿ Մինսկի խումբի ձեւաչափը, հակամարտու-

ՌԴ Դեսպան. «Միասին Կը Յաղթահարենք Գիւմրիի Ողբերգութիւնը»

Գիւմրիում տեղի ունեցածն ընդհանուր ողբերգութիւն է: Նման գազանութիւններն արդարացում չունեն, ինչպէս նաեւ ազգային եւ պետական պատկանելութիւն: Այս մասին «Ռոսիա 24» հեռուստաալիքին տուած հարցազրոյցում յայտարարել է Հայաստանում Ռուսաստանի դեսպան Իվան Վոլինկինը: «Դա հրէշաւոր ողբերգութիւն է: Այստեղ դժուար է բառեր ընտրել, կատարուածը պարզապէս սարսափեցնում է: Դեսպանութեան բոլոր աշխատակիցները ցնցուած էին, երբ իմացան կատարուածի մասին: Դա ընդհանուր ողբերգութիւն է, ընդհանուր ցաւ ինչպէս հայ, այնպէս էլ ռուս ժողովրդի համար: Ես հասկանում եւ ընդունում եմ կատարուածի շուրջ հասարակութեան արձագանգը: Կը ցանկանայի եւս մէկ անգամ ցաւակցութիւնս յայտնել այդ յանցագործութեան անմեղ զոհերի հարազատներին եւ մտերիմներին, ամբողջ հայ ժողովրդին», - դեսպանի խօսքերն է մէջբերում ՏԱՍՄ-ը: Դիւանագէտը նաեւ յաւելել է. «Մենք՝ Ռուսաստանի քաղաքացիներս, Գիւմրիի բնակիչներին, Հայաստանի եղբայրական ժողովրդին



Ռուսաստանի դեսպան Իվան Վոլինկին հետ կիսում ենք նրանց ցաւը: Հայկական եւ ռուսական իրաւասու մարմինները համատեղ հետաքննութիւն են անցկացնում, այն, իհարկէ, պէտք է օբյեկտիւ եւ համակողմանի լինի: Վստահ եմ, որ յանցագործը կը պատժուի օրէնքի ամբողջ խտուրթեամբ»: Ըստ Վոլինկինի, ռուս-հայկական դարաւոր բարեկամութեան ընթացքում «եղել են դժուարին էջեր, սակայն մենք միշտ համատեղ ուժերով յաղթահարել ենք դժուարութիւնները»: «Հաւատում եմ, որ այդպէս կը լինի նաեւ հիմա»:

ՀՀ Հիւպատոսը Քեսապցիներին ՀՀ Քաղաքացու Անձնագրեր Է Յանձնել

Փետրուարի 6-9-ը Հալէպում ՀՀ գլխաւոր հիւպատոս Տիգրան Գէորգեանն այցելել է Լաթաքիա եւ Քեսապ: Քեսապում հիւպատոսը անձնագրեր է յանձնել տեղի հայերին: Փետրուարի 7-ին եւ 8-ին Տիգրան Գէորգեանը հանդիպումներ է ունեցել տեղի ազգային իշխանութիւնների ներկայացուցիչների հետ: Քննարկուել է Սիրիայի ծովափնեայ շրջաններում բնակուող, յատկապէս Հալէպից, Ռաքաքից եւ այլ քաղաքներից գաղթած հայութեան կացութեանն առնչուող հարցերի լայն շրջանակ, փոխանցում է Հայաստանի արտաքին գործերի նախարարութիւնը: «Փետրուարի 9-ին Քեսապի Սուրբ Խաչ եկեղեցու սրահում գլխաւոր հիւպատոսը քեսապցիներին յանձնեց ՀՀ քաղաքացու անձնագրեր: Այնուհետեւ գլխաւոր հիւպատոսը հանդիպեց Քեսապի քաղաքային իշխանութիւնների ներկայացուցիչներին հետ, որի ընթացքում քննարկուեցին Քեսապի վերականգնմանն առնչուող հարցերը, ինչպէս նաեւ քեսապցիներին յուզող մի շարք այլ խնդիրներ եւ դրանց լուծման հեռանկարները», - ասուած է պաշտօնական հաղորդագրութիւնում: Լաթաքիա այցելութեան երկու օրերի ընթացքում տեղի Հայոց Ազգային Առաջնորդարանում Հալէպում ՀՀ գլխաւոր հիւպատոսութեան աշխատակիցները իրականացրել են հիւպատոսական ընդունելութիւն: Սիրիայի հիւսիսարեւմտեան շրջաններում բնակուող հայերի համար:

Միացեալ Նահանգները Պատրաստ

Շարունակուած էջ 1-էն կամ մրցակցութեան պարունակին մէջ, այլ, երկրների հետ սերտ յարաբերութիւններ հաստատելու տեսանկիւնէն, չբացառելով, որ այդ երկրները կրնան յարաբերութիւններ գործարկել նաեւ այլ երկրներու հետ»: «Մենք նաեւ պատրաստ ենք աշակցելու ժողովրդավարութեան եւ քաղաքացիական հասարակութեան կայացման հարցով, որ Հայաստանի լուրջ ձեռքբերումներէն է: Փաստ է, որ Հայաստան ունի իրական բազմակուսակցական

խորհրդարան, որ մամուլի մէջ գոյութիւն ունի իրական բանավէճ, Հայաստանի մէջ առկայ է հաւաքներու ազատութիւն, առկայ է հասարակութիւն, ուր մարդիկ կրնան արտայայտել իրենց հայեացքները, եւ մենք կ'ուզենք սատարել այդ ամէնուն՝ աշխատելով իշխանութիւններուն հետ: Իմ կարծիքով, այս ոլորտէն ներս Հայաստան իսկական ձեռքբերումներ արձանագրած է վերջին տարիներու ընթացքում, - ըսած է ԱՄՆ-ի պետական քարտուղարի Եւրոպայի ու Եւրասիայի հարցերով օգնականի տեղակալ Էրիկ Ռուպին:

թեան կարգաւորման գործընթացին մէջ ներառելով նաեւ ոչ հայամէտ երկրներ: «Նրանց պաշտօնական շրջանակները բացայայտ յայտարարում են, որ պէտք է հասնել այնպիսի մի ձեւաչափի ստեղծման, որտեղ կը լինեն երկրներ որոնց կառավարութիւնների վրայ հայկական Մփիւռքը ազդեցութիւն չի ունենայ, եւ

դրա տակ դիտարկուած են Թուրքիան, Գերմանիան եւ այլն: Նրանց պէտք է այնպիսի մի մասշտաբի արկածախնդրութիւն, ապաստեցում կամ լարուածութիւն, անկայունութիւն, որը գուցէ չբերի պատերազմական յաղթանակների Ատրպէյճանի համար, բայց նրանք յոյս ունեն», - «Ազատութեան» հետ զրոյցի ընթացքին ըսաւ քաղաքագէտը:

ՖՐԱՆՍԱ

Ս.Դ.Ջ.Կ. ՆԱԶԱՐԲԵԿ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵ «ԹԱԼԵԱԹ ՓԱՇԱՅԻ ՏԵՏՐԸ» ՑՈՒՑԱՅԱՆԴԵԱԸ



Հինգշաբթի, Փետրուար 5, 2015-ի, երեկոցան ժամը 8-ին, Ալֆորվիլ քաղաքի «Թիւ 148» քաղաքապետական ցուցահանդէսներու սրահին մէջ հաւաքուած էր բազմութիւն: Հոն, քիչ ետք բացումը պիտի կատարուէր «Թալէաթ Փաշայի Տետրը» խորագրով ցուցահանդէսին, կազմակերպուած Ս.Դ.Ջ.Կ. ՆԱԶԱՐԲԵԿ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ Կողմէ: Ալֆորվիլ քաղաքի, քաղաքապետական խորհուրդի անդամները կ'ընկերակցէին Ծերակուտական-Քաղաքապետ Պարոն Լուք Գարվոնասին, որ հրաւիրուած էր բացումը կատարելու ցուցահանդէսին, Ս.Դ.Ջ.Կ.-ի Ֆրանսայի շրջանի ատենապետ՝ Գէորգ Սաչլեանի եւ Ս.Դ.Ջ.Կ.-ի Ալֆորվիլի «Նազարէթ

առաջինը: Այս ցուցահանդէսով է, որ կը սկսի ընդհանուր ծրագիրը: Եւ շեշտեց «յիշողութեան պարտականութեան» եւ անոր փոխանցման կարեւորութիւնը: Անգամ մը եւս բացատրեց իրեն համար առաջնահերթութիւն նկատած համագործակցութեան քաղաքականութիւնը: Անդրադառնալով ցուցադրուած քարտէսներուն եւ փաստաթուղթերուն, ան շնորհաւորեց Արա Սարաֆեանը, իր տարած աշխատանքին համար եւ շնորհաւորեց Ս.Դ.Ջ.Կ. ՆԱԶԱՐԲԵԿ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ Իր առած որոշումին համար, Ալֆորվիլէն սկսիլ այս ցուցահանդէսը, որ պիտի այցելէ ֆրանսական տարբեր քաղաքներ: Ժամը հասած էր լսելու Արա Սարաֆեանը: Ան իր ելոյթը կեդ-



Արա Սարաֆեան

Բշտիկեան» մասնաճիւղի ատենապետ՝ Սարո Մարտիրեանի հետ: Բացումին յաջորդեց ցուցահանդէսին բացատրականը, զոր կատարեց Արա Սարաֆեան, լոստոնաբնակ պատմաբան եւ Կոմիտաս Հիմնարկի տնօրէն, որ սիրալոյսով տրամադրուած էր իր աշխատասիրութեան, «Թալէաթի Զեկոյցը» գիրքին արդիւնքները, որոնք մաս կը կազմէին ցուցադրութեան: Կազմակերպիչ միութեան անունով խօսք առաւ Սեւակ Սարիգաչ: Ան անդրադարձաւ սոյն ձեռնարկին կարեւորութեան, մանաւանդ որ ան ընդգրկուած էր Ալֆորվիլի, Հայոց Յեղասպանութեան 100 ամեակին նուիրուած ծրագիրներուն մէջ: Ան խօսքը յանձնեց Լուք Գարվոնասին, որ չիչեցուց թէ այս ձեռնարկը կը հանդիսանայ Ալֆորվիլ քաղաքի Հայոց Յեղասպանութեան 100 ամեակին նուիրուած ծրագիրներուն

րոնացուցած էր Թալէաթի այն փաստաթուղթին վրայ, որ մաս կը կազմէր ցուցահանդէսին, ուր ամփոփուած էր անոր իսկ հրահանգով կատարուած մարդահամարը, 11 Փետրուար 1917-ին: Հոն, Թալէաթ, պարզ թուղթի կտորի մը վրայ մանրակրկիտ արձանագրուած էր թուագրական վերլուծումներ եւ բաղդատական ըրած 1914-ի Հայկական մարդահամարին եւ 1917-ի իր հրահանգած գեկոյցին միջեւ: Արա Սարաֆեան շեշտեց կարեւորութիւնը նման փաստաթուղթերու գիտական վերլուծման եւ վերլուծումներուն օգտագործումը: Արա Սարաֆեանը աւարտեց իր ելոյթը, չիչեցնելով, թէ այս ուսումնասիրութիւնները կարելի եղան նաեւ շնորհիւ Մուրատ Պարտաքճիին, որ Թալէաթի ընտանիքին մօտիկ բարեկամ ըլլալով, անոր սպանութեանէն ետք, ձեռք ձգեց անոր անձնական արխիւները: Թալէաթ իր հետ Գերմանիա

ԹԱԼԵԱԹ ՓԱՇԱՅԻ ԶԵԿՈՅՑԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԸ



Թրքական արխիւներուն կողմէ վերջերս հրատարակուած փաստաթուղթերը, Թալէաթ փաշայի անձնական թուղթերուն հետ միասին կ'ապացուցեն, որ ան իսկապէս Հայոց ցեղասպանութեան «ճարտարապետն» էր: Ըստ արձանագրութիւններու՝ ինք հրամայած էր գործադրել 1915-16 թուականներու Օսմանեան կայսրութեան մէջ հայերու տեղահանումը եւ ուշադիր հետեւած էր անոնց իրականացման: Թալէաթին կը գեկուցէին տեղահանման տարբեր փուլերու, ինչպէս նաեւ յատուկ վերաբերումի արժանացածներու ճակատագրերուն մասին:

մինչեւ այժմ գոյութիւն ունի, քանի որ Թալէաթը սպաննուեցաւ 1921 թուականին, իսկ անոր այրին գեկոյցը փոխանցեց թուրք պատմաբանի մը, որ վերջինս զայն սուրբաբար:

Հակառակ անոր, որ Օսմանեան կայսրութեան վերաբերող նիւթերուն մեծ մասը դեռ թրքական արխիւին մէջ է, արդէն հասանելի արձանագրութիւնները ցոյց կու տան, որ օսմանեան տեղահանութիւնները ընդամենը կը շղարշէին հայերու ոչնչացումը:

Նոյնիսկ թրքական արխիւը առ այսօր նման որեւէ արձանագրութիւն չէ հրատարակած, 1917 թուականի գեկոյցին մէջ ներկայացուած տուեալները կարելի է ստուգել հասանելի օսմանեան նիւթերով, եւ ան ենթակայ է ուսումնասիրութեան:

Մասնաւորապէս պարզ կը դառնայ, որ այսպէս կոչուած հայերու վերաբնակեցման գօտիին մէջ 100.000-էն նուազ հայ կենդանի մնացած էր: Ըստ Հայոց ցեղասպանութեան մասին Թալէաթի գեկոյցին՝ Օսմանեան կայսրութեան մէջ հայերու մեծ մասը անհետացած էր 1915-1917 թուականներուն, կամ ալ ձուլուած ու ցրուած Օսմանեան տարբեր շրջաններ:

Ըստ Թալէաթի տուեալներուն՝ միայն 1915-1917 թուականներուն Օսմանեան կայսրութեան մէջ 1,150,000 հայ անհետացած է՝ ներառեալ այն 100.000 հայերը, որոնք 1915-ին փախան կայսրութենէն: Բայց այս հաշուէն դուրս մնացած են տասնեակ հազարաւոր հայ կանայք եւ երեխաներ, որոնք ձուլման նպատակով տեղաւորուած են մահամետական ընտանիքներու եւ պետական որբանոցներու մէջ:

Թալէաթ փաշայի Հայոց ցեղասպանութեան վերաբերեալ գեկոյցը եղածներէն ամենապաշտօնական տեսակէտն է: Զեկոյցը, անկասկած, պատրաստուած էր Թալէաթ փաշայի անձնական օգտագործման համար եւ բնաւ պիտի չհրատարակուէր եւ, հաւանաբար,

Թալէաթ փաշայի գեկոյցի հրատարակման մէջ պատմաբան Արա Սարաֆեան կը դիտարկէ 1917 թուականի գեկոյցը այլ օսմանեան գեկոյցներու համադրանքին մէջ: Ան մանրամասնօրէն կը ներկայացնէ Թալէաթի վիճակագրութիւնը եւ կ'ընդգրկէ գեկոյցին բովանդակութիւնը նկարագրող 2 անգնահատելի գունաւոր քարտէս, ինչպէս նաեւ Հայոց ցեղասպանութեան վերաբերող լրացուցիչ օսմանեան փաստաթուղթեր:

Ալիւր հաստատեց

Շարունակուած էջ 2-էն
պէջճանի տարած քայլին ամբողջականութիւնը վաղուց արդէն չի ընկալուած այն սահմաններում, որոնց մասին խօսում է Ալիւրը: Իսկ Հայաստանը: Մինչ Միւնխենում Հայաստանի պատուիրակութեան ներկայացուցիչները յետ էին մղում Ալիւրի հարուածները, Նալբանդեանը հետաքրքիր հանդիպումներ էր անցկացնում: Նա հանդիպել է իրաքեան Քրդստանի նախագահ Մասուդ Բարզանիին եւ պայմանաւորուել Հայաստանի ու իրաքեան Քրդստանի միջեւ յատարած էր իր «Տետրը», իբր իր արարքին բարձրագոյն գնահատանքը: Զեռնարկը աւարտեցաւ Արա

րաբերութիւնների ամրապնդման շուրջ: Հայաստանն ապագայ Քրդստանի հետ կարող է դառնալ իրավիճակի փոփոխութեան դետոնատորը, եւ ոչ միայն Մերձաւոր Արեւելքում: Իսկ թէ ինչ տեղ կը յատկացուի Ատրպէյճանին ապագայ աշխարհակարգում, կարելի է ենթադրել Միւնխենի համաժողովում Ալիւրի ելոյթի հանդէպ արձագանքից: Ատրպէյճանը կորցրել է իր դերն ու նշանակութիւնը համաշխարհային քաղաքականութեան մէջ: «ԼՐԱԳԻՐ»

Սարաֆեանի, Կոմիտաս Հիմնարկի հրատարակութեամբ լոյս տեսած գիրքերու մակագրութեամբ:

«Ապրիլ 24-ը Յեռու Պահենք Ներքաղաքական Հարցերին»

Շարունակում է 1-ին

հանուր կազմակերպչական մարմիններուն մասին, մանրամասնորեն ներկայացուց այսօր աշխարհով մէկ սփռուած Հնչակեան կուսակցութեան ունեցած կեդրոններն ու մշակութային, երիտասարդական, կրթական-բարեսիրական եւ Հայ Դատի գործունէութիւն ծաւալող միաւորներուն մասին ամփոփ տեղեկութիւններ:

Ապա ընկեր ատենապետը ներկայացուց այն բոլոր հանգամանքները, որոնք խթան հանդիսացան, որ Հնչակեան կուսակցութիւնը դառնայ Հայաստանակեդրոն եւ իր կեդրոնական գրասենեակը տեղափոխէ Երեւան: Ընկերը այս առումով դիտել տուաւ, որ անկախութեան համար պայքարած եւ տուած ենք հազարաւոր նահատակներ այդ գոհասեղանին, կը կարծեմ, որ ճիշդ էր հայ ժողովուրդի պատմութեան առաջին քաղաքական կուսակցութեան կեդրոնատեղին ըլլար Հայրենիքէն դուրս: Հետեւաբար, մեր տունդարձը աւելի քան հրատապ էր եւ պարտաւորեցնող: Մենք այս նախաձեռնութեամբ կ'ուզենք վստահութիւն ներշնչել հայրենի պետականութեան հանդէպ»: Ընկ. Տիգրանեան նաեւ կարեւորեց Սփիւռք-Հայաստան կապերու ամրացումը եւ վստահեցուց, որ Հնչակեան կուսակցութիւնը գինուած տարիներու իր փորձառութեամբ պիտի սատարէ այդ յարաբերութիւններու ամրացման եւ ուժեղացման:

Ան նաեւ ըսաւ, որ կուսակցութիւնը դրական ոգիով պիտի ներգրաւուի հայրենի քաղաքական դաշտին մէջ: Ընկերը բացատրելով Սփիւռքի եւ Հայաստանի կառուցներուն ունեցած առաջնահերթութիւնները դիտել տուաւ, որ «Սփիւռքի մէջ կուսակցութեան գլխաւոր նպատակն է հայապահպանումը, Հայ Դատի հետապնդումը, Յեղասպանութեան ճանաչումը, Արցախի Հանրապետութեան միջազգային ճանաչումը եւ Հայաստան-Սփիւռք կապերու ամրացումը: Իսկ Հայաստանի մէջ կուսակցութիւնը զուտ քաղաքական գործունէութիւն կը ծաւալէ»: Ան խօսելով կուսակցութեան ապագայ ծրագիրներուն մասին ըսաւ. «Գալով կուսակցութեան ապագայ ծրագիրներուն՝ այսօր մենք մէկ հիմնական նպատակ ունինք, որն է՝ ինքնակազմակերպումը: Ընդհանուր կառուցի ինքնակազմակերպում՝ քատրային, երիտասարդական, քարոզչական եւ այլն: Ինքնակազմակերպման գործընթացի մէջ ըլլալով հանդերձ մենք քայլ պիտի չպահենք քաղաքական զարգացումներուն հետ, այլ հակառակը, ըլլալով ինքնուրոյն քաղաքական տեսակէտներու տէր կուսակցութիւն, բոլոր կարեւորագոյն հարցերուն առընթեր պիտի բարձրաձայնենք մեր հիմնաւորուած տեսակէտները: Ինչպէս միշտ, քաջութիւնը պիտի ունենանք քննադատելու բացասականը եւ գնահատելու դրականը: Երբեք ու երբեք հակուած չենք ամէն ինչ «սեղնելու» եւ կամ այլ հակառակը՝ յարատեւ խնկարկողի դերին մէջ ըլլալու»:

Ընկեր Տիգրանեան խօսելով Հայաստանի ներքաղաքական կեանքի առկայ իրավիճակին մասին յայտնեց. «Այսօր Հայաստանի հասարակութեան մէջ առկայ է վստահութեան պակաս ընդհանրապէս քաղաքական վերնախաւի հանդէպ:

Մեր ժողովուրդը կորսնցուցած է վստահութիւնը թէ՛ իշխանութիւններու եւ թէ՛ ընդդիմութեան հանդէպ: Տնտեսական անմխիթար իրավիճակը, անգործութիւնը եւ յոյսի բացակայութիւնը կը ստիպեն մեր ժողովուրդը բռնել արտագաղթի ճանապարհը: Անհրաժեշտ է, որ քաղաքական ուժերը գիտակցին երկրի ու ժողովուրդի տագնապալի վիճակը: Քննադատութիւնները ըլլան ճիշդ եւ կառուցողական: Իրարու հանդէպ թշնամանք դրսեւորելու փոխարէն ըլլանք հանդուրժողական: Մենք պարտաւոր ենք քաղաքական մշակոյթը բարելաւել յօգուտ մեր պետականութեան ամրապնդման եւ մեր ժողովուրդի բարեկեցիկ ապագային»:

Կուսակցութեան ատենապետը խօսելով օրերս քննարկութեան մէջ եղող սահմանադրական փոփոխութիւններուն մասին ըսաւ. «Հնչակեան կուսակցութիւնը միշտ եղած է կողմնակից համակարգային փոփոխութիւններու: Ներկայ սահմանադրութեամբ, իշխանութիւնը եւ պետականութիւնը դարձած են հոմանիշներ: Կը հաւատանք, որ այսօր ստեղծուած է լաւ առիթ մը, սահմանադրական փոփոխութիւններ իրականացնելու համար: Մեր կարծիքով այդ փոփոխութիւնները պէտք է ըլլան օր առաջ եւ Հայաստան անցնի խորհրդարանական համակարգի՝ կիրառելով Համամասնական ընտրական օրէնք»: Ընկ. Տիգրանեան անդրադառնալով Հայաստանի եւ ՍՄ-ի անդամակցութեան՝ դրական համարեց այդ մէկը եւ ընդգծեց, որ Եւրասիական Տնտեսական Միութեան Հայաստանի անդամակցութիւնը վստահաբար դրական առիթներ պիտի շնորհէ Հայրենիքին: Ընկ. Տիգրանեան խօսելով Արցախեան աշխարհի անվտանգութեան մասին ըսաւ. «Լեռնային Ղարաբաղի հարցով Հնչակեան կուսակցութիւնը կը

վերահաստատէ Արցախի Հանրապետութեան ամրապնդման անհրաժեշտութիւնը եւ միեւնոյն ժամանակ անկախութեան միջազգային ճանաչման գործընթացին սատար կանգնելու մեր յանձնառութիւնը»: Ան նաեւ յիշեցուց, որ այս ուղղութեամբ, Սփիւռքի շարք մը երկիրներու մէջ համագործակցաբար միւս աւանդական կառույցներու հետ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան միջազգային ճանաչման սկսած գործընթացը կը շարունակուի»:

Իր խօսքի աւարտին Ընկ. Տիգրանեան անդրադարձաւ Հայոց Յեղասպանութեան հարիւրամեակի ոգեկոչման ընդհանուր հոլովոյթին եւ ըսաւ. «Հայոց Յեղասպանութեան 100-ամեակին ընդառաջ կ'ողջունենք համահայկական հռչակագիրը, հաւատալով, որ հռչակագրին մէջ տեղ գտած դրոյթները պիտի դառնան համազգային ուղեցոյց մեր գալիք ռազմավարութեան: Եթէ նախորդող 100 տարիները եղան ինքնութեան պահպանման, պահանջատիրութեան եւ ցեղասպանութեան ճանաչման տարիներ, ապա այսօր մենք կը գտնուինք

նոր հանգրուանի առջեւ:

Այս նոր հանգրուանը պէտք է ամրագրուի արդիական մօտեցումերով, իրաւական լուրջ հիմքերու ձեւաւորումներով եւ գործելադաշտի մէջ նոր հեռանկարներու կերտումով: Արդարութեան վերականգման ճանապարհը երկար է եւ դժուարին: Այն կը պահանջէ յարատեւութիւն, վճռականութիւն եւ գերագոյն ճիգ, առաւել եւս, երբ գործ ունինք կողմի մը հետ, որ ջանք չի խնայեր մեզ խոչընդոտել ամէն քայլափոխի: Անշուշտ, ցանկացած գործընթացի յաջողութեան կարեւորագոյն հրամայականը կը մնայ մեր ժողովուրդի բոլոր բաղկացուցիչ տարրերու միասնական ջանքերուն մէկտեղումը»:

Ընկ. Տիգրանեան աւարտելով իր խօսքը կոչ ուղղեց հեռու մնալ առճակատումներէն եւ ըսաւ. «Կոչ կ'ուղղեմ բոլոր քաղաքական ուժերուն հեռու մնալ ներքին առճակատումներէն եւ դադար տալ ներքին վէճերուն Ապրիլ ամսուան ընթացքին, ի յարգանս մեր միլիոնաւոր նահատակներու յիշատակին եւ որպէս ապացոյց մեր միասնականութեան»:

OFFICE SPACE FOR RENT
IN PASADENA
ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Ave
Pasadena, CA 91104
Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձքերով
Գետաքրքրուողներէն հեռաձայնել՝
(626) 398-0506



ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ
ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 60-ՍՄԵԱԿԻ
ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ
ՀԱՐԱԹ, ՄԱՐՏ 7, 2015ԻՆ
ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄԸ 8:00ԷՆ ՍԿՍԵԱԼ
DREAM PALACE-Ի ՀՔԵՂ ՀԱՆԴԻՍԱՍՐԱՀԻՆ ՄԷՁ
510 E. Broadway Ave. Glendale CA. 91205
For More Info Call: (626) 422-9121 or (818) 590-9293
Սոււր՝ \$75

ԽՕՍԲՈՎ ՓԻԼԱԲ ՉԵՓԻՐ, ՊԱՐՈՆ ՎԱՐՉԱՊԵՏ

ՅՈՎԱՆՔ ՄԵԼՔՈՆԵԱՆ

Պոլսահայ նահատակ լրագրող Հրանդ Տինքի սպանության ճրգ տարեկիցին առիթով 19 Յունուար 2015 թվականին Թուրքիոյ վարչապետ Աճմէտ Տաւուսօղլու ուղերձ մը յղելով ընդհանրապէս միջազգային հանրութեան եւ մասնաւորապէս հայ ժողովուրդին, ի միջ ալ լոց յայտարարած է: «Հայ թրքական բարեկամութեան հաւատացող բոլոր անձերը կը հրաւիրենք նոր սկիզբի մը համար աջակցութիւն ցոյց տալու եւ այս հարցով կ'ուզենք դիմել բոլոր հայերուն»: Ու կ'աւելցնէ: «Աշխարհագրական նոյն վայրին մէջ ապրող եւ երկար ժամանակ հասարակաց պատմութիւն կերտած հայերը եւ թուրքերը կրնան իրարու հետ խօսակցիլ եւ միասնաբար լուծուի մը ճամբաները որոնել... Հասարակաց ցաւը կիսելու, վէրքերը սպիացնելու եւ բարեկամութեան ճամբով համերաշխութիւն վերահաստատելու մեր ձգտումը անկեղծ է»:

Հարցերու խորքին, հոլովոյթիւն եւ պատմութեան անձանօթ անձ մը կամ անձեր թուրք պետական անձնաւորութեան մը այս յայտարարութիւնը կրնան շատ դիւրութեամբ իբրեւ դրական եւ օրինակելի երեւոյթ համարել եւ հայ ժողովուրդէն սպասել անոր համապատասխան փոխադարձ հասկացողութիւն: Արդարեւ, փոխադարձ հասկացողութեան եւ միասնաբար հարցերը խաղող բանակցութեանց ճամբով լուծելու ըմբռնումը եւ սկզբունքը միջազգային փոխ-յարաբերութեանց ամէնէն բաղձալի միջոցներէն մին կը դասուի այս դարուն եւ կը սեպուի քաղաքակրթութեան աշխարհի վարուելակերպի ամէնէն վաւերական չափանիշներէն մին:

Սակայն այս անկիւնէն դիտուած իսկապէս ի՞նչ կ'ըսէ թուրքիոյ վարչապետ Աճմէտ Տաւուսօղլու:

Նոր եւ յարատեւօրէն զարգացող ռազմավարական երզի մը յանկերգն է գոր թուրքիոյ ներկայ վարչակազմի անդամները ժամանակէ մը ի վեր կը գործածեն համաշխարհային հանրային կարծիքի մօտ Հայոց Յեղասպանութեան հարցով թուրքիոյ նկատմամբ դրական տրամադրութիւն մը եւ դիրքորոշում մշակելու եւ զարգացնելու համար: Անոնք այս ձեւով կ'ուզեն առաջը առնել թուրքիոյ նկատմամբ հաւանական

ոեւէ ժխտական քայլ կամ որոշում որ կ'առնուի Հայոց Յեղասպանութեան:

Այս զարգացող երզի համաձայն թուրքիա միջազգային հանրութեան առջեւ մի քանի տարբերակներով կը բացատրէ հայ-թուրք յարաբերութիւններու բնոյթը՝ «1915ի դէպքեր»ու լոյսին տակ:

ա. առաջին համաշխարհային պատերազմի հետեւանքով, եւ անոր ընթացքին, թուրքիա ազգային անվտանգութեան նկատառումներէ մեկնած «պարտադիր կերպով հայեր տեղափոխած է Անատոլուի նահանգներէն»: Այդ տեղափոխութեանց ընթացքին «անընդունելի» մարդկային զոհեր եւ խժոժութիւններ պատահած են հայերուն:

բ. «հայերու դաւաճանական եւ ըմբոստական արարքները» այդ շրջանին ստիպած են Օսմանեան կայսրութիւնը զանազան նախագրուչական միջոցառումներ ձեռք առնելու, ներառեալ հայերու պարտադիր «տեղափոխութեան» որոշումը՝ երկրի ամբողջականութիւնը ապահովելու համար:

գ. հայեր եւ թուրքեր, իբրեւ Օսմանեան կայսրութեան հպատակներ, հաւասարապէս տուժած, տառապած ու զոհ տուած են Առաջին Համաշխարհային Պատերազմի տարիներուն: Այդ դժինք տարիներու տակնուվրայութեանց հետեւանքով «ցաւալի դէպքեր» պատահած են, թէեւ զոհերուն թիւը չափազանցուած է հայկական շրջանակներու կողմէ:

դ. հայ ժողովուրդին հետ երկխօսութիւն մը ստեղծելու ջանքերը կարեւոր հանգրուան մը մտած են եւ թէ «անցեալը մոռցուկ է» տրամաբանութեան մը հիման վրայ կարելի է այժմ բաղձալի հաշտութիւն մը գոյացնել երկու ժողովուրդներուն միջեւ:

Այս հայեցակէտերու վրայ հիմնուած թուրք ռազմավարական մօտեցումը Հայոց Յեղասպանութեան պատմական ընթացքին քաջատեղեակ ու ծանօթ շրջանակներու համար աւելի անպարարական բնոյթ կը կրէ քան թէ գործնական մօտեցումով լուծումներ գտնելու անկեղծ պատրաստակամութիւն եւ իրապաշտ տրամադրութիւն: Աւելին, կը փորձէ միջազգային հանրային կարծիքի մօտ մտադրեալ շփոթութիւն եւ տարակուսանք քառաջացնել Հայոց Յեղասպանութեան դրդապատճառներու եւ Հայ Դատի պատմական խորքին նկատմամբ, այն յոյսով որ «բարդ եւ

ԻՐԻՆԱ ԶԱՔԵԱՆ,- Ծնուել է Գլենդեյլում: Աւարտել է Երեւանի պետական երաժշտանոցի վոկալ-երգեցողութեան բաժնի դասատու Նէլլի Փիրումովայի դասարանը: Որպէս օպերային երգչուհի, Իրինա Զաքեանը մշտապէս ելույթներ է ունենում Հայֆիլհարմոնիայի եւ օպերային թատրոնի սիմֆոնիկ նուագախմբերի հետ: Յաճախ երգչուհին ելույթներ է ունենում օտար բեմերի վրայ: Եղել է Միացեալ Նահանգներում, Կանադայում,


Իտալիայում, Իսպանիայում, Գերմանիայում, Չինաստանում եւ այլուր: Իրինա Զաքեանը ելույթներ է ունեցել բազմաթիւ հայ եւ օտարազգի դիրիժորների հետ: Մասնակցել է միջազգային բազմաթիւ մրցոյթներին: Երգչուհու յայտագրում են Արեւմտաեւրոպական կոպոզիտորների բոլոր նշանաւոր օպերաները:

ԼԻԼԻԹ ՊԵՏՐՈՍԵԱՆ,- Սկզբում որպէս դաշնակահարուհի, այնուհետեւ տարուել է երգչական արուեստով: Ծնուել է Հայաստանում: 1994-ին աւարտել է Ալ. Հեքիմեանի անուան երաժշտական դպրոցի դաշնամուրի բաժինը: 2003-ին աւարտել է Երեւանի Սայաթ Նովայի անուան երաժշտական դպրոցի վոկալ-երգեցողութեան բաժինը: Լիլիթ Պետրոսեանը իր երգչական-արտիստական գործունեութիւնը սկսել է ԱՐՅԱԽ նուագախմբում:

ԱՐՄԷՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ,- Դուրեւահար, մենակատար: Աւարտել է Երեւանի պետական երաժշտանոցի ժողովրդական երաժշտութեան բաժնի Գէորգ Դաբաղեանի դասարանը: Ներկայումս սովորում է ասպիրանտուրայում պրոֆեսոր դառնալու մտադրութեամբ: Անցեալ տարի իր մենահամերգում կատարել է Հենրիկ Անասեանի Դուդուկի կոնցերտը՝ դաշնամուրի նուագակցութեամբ: Ընդառաջելով իր խնդրանքին, հեղինակը նուագախմբային նուագակցութիւնը փոխադրել է դաշնամուրի նուագակցութեան:

Հենրիկ Անասեանի Դուդուկի կոնցերտը նուագախմբի հետ նախապէս կատարուել է Կարակասում (Վենէսուէլա, մենակատար՝ Պէդրօ Էնստաչէ), այնուհետեւ՝ Երեւանում, երկու անգամ, մենակատար՝ Գէորգ Դաբաղեան: 2014-ին կոնցերտը հնչել է Ռուսիայի բազմաթիւ քաղաքներում, ազգութեամբ ռուսինացի Կոսմին Բալեանի (չչփութել ԲԱԼԵՆԻ հետ) կատարմամբ:

Հենրիկ Անասեանի Դուդուկի կոնցերտը՝ նուագախմբի հետ, առաջին անգամ է կատարուելու Լոս Անճելեսում:



PANEL DISCUSSION

ARMENIAN IDENTITY
in the 21st Century

PANELISTS

| | |
|---|---|
| FR. VAZKEN MOVSESIAN <i>A Priest of the Armenian Church</i> | EDGAR MARTIROSYAN <i>Attorney and Activist</i> |
| TSCOLINE MATOSSIAN, Psy.D. <i>Clinical Psychologist and Author</i> | ARMEN MANUK-KHALOYAN <i>Armenian Studies and History Master's Candidate of OSU</i> |
| MARAL VOSKIAN <i>Elementary Armenian Language Instructor at AGBU-MSJ</i> | KEVORK KURDOGHIAN <i>OSU Political Science Bachelor's Candidate</i> |

February 22, 2014
at 3:00 pm

GLENDALE CENTRAL LIBRARY
222 East Harvard Street
Glendale, CA 91205

Free Admission

Library visitors receive 3 hours FREE parking across the street at The Market Place parking structure with validation at the Library Loan Desk

www.armenianidentity.org
email: info@armenianidentity.org

Facebook: /ArmenianIdentity
Twitter: /ArmenianIdentity

833 W. Glendoaks Blvd. Glendale, CA 91202 (818) 240-0065




Dr. Missak Ekmekdjian
Chiropractor

Dr. Anahid Ekmekdjian
Chiropractor

Մեծահասակներու և մանուկներու Բայթոփոքայից բուժում:
Գլխացաւ, վզի, մէջքի, յոզային և մկանային ցաւեր:
Քրոնիկական վնասումներու պատահած վնասումներու բուժում:

Չեր առողջութիւնը մեր մտահոգութիւնն է

ՅՈՒՇ ԵՐԵՎՈՅ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԽԱՐԲԵՐԴՅԻ ԵՐԵՔ ՆԱՅԱՏԱԿ ՄՏԱԻՈՐԱԿԱՆՆԵՐՈՒ



Կիրակի, 25 Յունուար, 2015ի երեկոցեան ժամը 6:30ին, Կլէնտէյլի Իրանահայ Միութեան հանդիսասարահէն ներս, Հայկական Յեղասպանութեան 100-ամեակին առիթով, հովանաւորութեամբ Լոս Անճելըսի Միացեալ Հայկական Խորհուրդի եւ կազմակերպութեամբ Ամերիկայի Խարբերդ Մշակութային Միութեան վարչութեան, տեղի ունեցաւ հրապարակային յուշերեկոյ մը նուիրուած՝ Խարբերդցի հայ երեք նահատակ մտաւորականներէն՝ Ռուբէն Զարդարեանի, Թլկատինցիի եւ փրոֆ. Յովհաննէս Պուճիքանեանի:

Չեռնարկին Լոս Անճելըսի Միացեալ Հայկական Խորհուրդի համատեղապետներ՝ Ժան Գոսաքեանի եւ Դաւիթ Սամուէլեանի կողքին ներկայ էին նաեւ Լոս Անճելըսի Քաղաքի Խորհուրդի անդամ Խարբերդցիի գաւակ՝ Փօլ Գրիգորեանն եւ իր տիկինը, շրջանի Հ.Յ.Դ. Կեդրոնական Կոմիտէին՝ Վահէ Պօզոյեանը, Հիւսիսային Ամերիկայի Աւետարանական համայնքի պետ՝ վերապատուելի Յովսէփ Մաթոսեան, «Medical Outridge» «Մետրքըլ Աութրիճ»-ի հիմնադիր նախագահ՝ տոքթ. Վարդգէս եւ տիկինը՝ Մէլլոր Նաճարեան, Լոս Անճելըսի Իրանահայ Միութեան Խնամակալ Մարմնի նախագահ՝ Արսէն Դանիէլեան, Կլէնտէյլի Միացեալ վարժարաններու Խնամակալ Մարմնի Նախագահ՝ Նայիրի Նահապետեան, Կլէնտէյլ քաղաքի յանձնակատար՝ Վարդան Կարապետեան եւ շրջանի հայրենակցական միութիւններու ներկայացուցիչներն ու աւելի քան 150 մշակութասէրներ, հայրենակիցներ եւ հիւրեր:

Օրուան հանդիսավար եւ վարչութեան փոխ ատենապետ Արա Ահարոնեան, որ ձեռնհասօրէն վարեց իր պաշտօնը, նախ բարի գալուստի ու շնորհակալութեան բացման իր խօսքէն ետք հրաւիրեց ներկաները հարիւր երկվայրկեան յոտնկայս լուծեան, ի յարգանս Մեծ Եղեռնի հարիւրամեակի չիշատակին եւ ապա ներկայացնելէ ետք օրուան հիւրերը, ըսաւ. «Հայ ժողովուրդի իմացական, ազգային ու հոգեւոր նուիրեալներու նահատակման դարադարձի տարին է այս տարի, ուստի իբրեւ գիտակից ժառանգորդներ, տէր պէտք է կանգնինք մեր պահանջատիրութեան վերանորոգ ուխտով»: Հանդիսավարը նաեւ չիշեց ու շեշտեց 2015 թուականի արժեւորումն ու այս առթիւ Խարբերդ Մշակութային Միութեան սոյն ձեռնարկի յայտագիրը:

«Հարիւր ամեակ մը ամբողջ ամերիկահայութեան կենցաղին հետ

աւընչուելով, մեծ ու կարեւոր դեր խաղացած է խարբերդցին, նոյնիսկ ամերիկեան քաղաքական կեանքէն ներս»: Ապա Ահարոնեան ներկայացուց Խարբերդ նահանգի պատմական թիւը, ինչպէս նաեւ նոյն նահանգի նահատակ ղեկավարներուն ու հոգեւոր պետերուն անուններն ու անոնց կատարած դերը մեր ազգային կեանքէն ներս, որմէ ետք բեմ հրաւիրեց Լոս Անճելըսի Միացեալ Հայկական Խորհուրդի համատեղապետներէն՝ Ժան Գոսաքեանը, որ իր կարգին չիշեց, թէ այս ձեռնարկը Միացեալ Հայկական Խորհուրդի այս տարուան ընթացքին կազմակերպուելիք նախաձեռնութիւններուն առաջինն էր: Ան նաեւ մեծապէս գնահատելէ ետք երեկոն, հրաւիրեց ներկաները յաջորդող ձեռնարկներուն իրենց ներկայութեամբ գորակցելու եւ աջակցելու այս տարուան բոլոր հրապարակային ձեռնարկները:

Իր կարգին, իբրեւ առաջին բանախօս, Գէորգ Պետիկեան ներկայացուց Խարբերդցի մեծանուն մտաւորական, արձակագիր, գրականագէտ, քննադատ, թարգմանիչ, տաղանդաւոր մանկավարժ, իմբազիր եւ հայ լեզուի ու գրականութեան ուսուցիչ Ռուբէն Զարդարեանը, որ իր գրիչով հայ ժողովուրդի ազատութիւնը ինկարկած էր թրքական բռնատիրութեան լուծին դէմ:

«Զարդարեան տաղանդաւոր հայ հեղինակ մըն էր, վաղուան հայ գրականութեամբ մտահոգ խարբերդցի մտաւորականներէն մէկը եւ որ միշտ գրեց ջերմութեամբ, հաւատքով եւ մեր գրականութեան բերաւ ներշնչման նոր նիւթեր. հայրենի գիւղ, հող, գաւառ եւ հայ գիւղացի: Ես գինք ճանչցայ, տակաւին ազգային նախակրթարանի նոր շրջանաւարտ տարիքիս, երբ Պոլսէն, մօրս ազգականներէն մէկը իբրեւ նուէր, ինծի կը ղրկէր Ռ. Զ. ի «Մեղրագետ» դասագիրքերէն մէկական օրինակ:

Պետիկեան նաեւ շեշտեց Զարդարեանի երախտագիտութեամբ նուիրուած ուսուցչական ասպարէզին մասին, որուն ընթացքին դասաւանդած էր հայերէն եւ ֆրանսերէն լեզուներ, գրականութիւն եւ պատմութիւն:

Մանրամասնելէ ետք լեզափոխական եւ յատկապէս դաշնակցական Ռուբէն Զարդարեանի կեանքի բաժինները, բանախօսը ծանրացաւ անոր մտաւոր աշխատանքներուն եւ գրական գործերուն մասին, որ տեւած էր մինչեւ իր եղբրական մահը:

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԵՇՄԱՐԻՏ ԴԵՏՔԵՐՈՎ ԴԵՊԻ ԶԱՅՐԵՆԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ (ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՕՆԻ ԱՌԻՈՎ)

Ռ. ԿՈՐԻԻՆ

Ժողովուրդները ապրում եւ գոյատեւում են իրենց անցեալի պատմութեան չիշատակութիւններով ու հիմնաւորուած սեփական մշակոյթով՝ իրենց հայրենի հողի վրայ, որոնք կազմում են սերունդների շարունակական կեանքի հոգեւոր սնունդը, ծառի արմատը որպէս օրինակ, նոյնն էլ ժողովուրդների կեանքում, սերունդներ առանց իրենց պապերի կերած պատմութեան ու մշակոյթի հաւատարմութեան կը կորցնեն ինքնութիւնը եւ իրենց ով լինելը:

Հայութիւնը հնագոյն ժողովուրդներից է իր հինգ հազար ամեայ պատմութեամբ եւ մշակոյթով: Ժամանակին տիրապետում էր ամբողջական հայրենիքին ծովից-ծով սահմաններով՝ դառնալով տարածաշրջանի հզօր պետութիւն, սակայն քրիստոնէութեան ընդունումին յաջորդող դարերում հետզհետէ մեծ կորուստներ ունեցաւ անմիաբանութեան եւ գուրկ ազգային-պետական քաղաքականութիւնից, շարունակ տանուլ տուեց ու դարեր շարունակ տառապեց օտարների լծի տակ: 387-ին Հայաստանը բաժանուեց երկու մասի, 428-ին Հայաստանը կորցրեց իր անկախութիւնը եւ թագաւորութիւնը: 451-ին տեղի ունեցաւ Վարդանանց ճակատամարտը ի գին նիւթական եւ մարդկային մեծ կորուստների:

Մեր պապերը ճիշտ ընտրութիւն էին կատարել կառչելով ժամանակի լեզափոխական կրօնին՝ քրիստոնէութեան, սակայն մեր ժողովրդի համար թանկ արժեք պիտի մեկնաբանութիւնների պատճառով:

Վարդանանքի մասին շատ է գրուել եւ խօսուել, վիճաբանութիւնների ասուլիսներ է կազմակերպուել ճակատամարտին թեր եւ դէմ կարծիքներ են հնչել, դրանովհանդերձ որ Վասակ Սիւնին պարսից կողմից էր նշանակուել մարզբան, նա խոհեմ քաղաքականութիւն էր վարում, ջանում էր կրօնական հարցով պատերազմ չլինի, այլ դիւանագիտութեամբ կրօնափոխութեան պահանջը չեղեալ համարել: Վասակը հասել էր այդ պահանջին, սակայն հակառակ հոսանքի կողմից թիւր հասկացուեց: Անմիաբանութեան հետեւանքով ուժերը ջլատուեց եւ անաւոր ցաւալի աւարտ ունեցաւ: Եթէ նրանք Վասակ Սիւնու հետ համագործակցաբար քաղաքականութիւն վարէին կրօնափոխութեան հարցը չեղեալ կը համարուէր, այդքան արժանաւոր մարդկանց կորուստ չէր լինի եւ ով գիտէ՝ վերականգնէր Հայաստանի թագաւորութիւնը Վասակ Սիւնու միջոցով:

Մի շարք պատմաբանների հաւատարմութեամբ այն մասին թէ՛ Վարդանանց ճակատամարտը հերոսական ընդգրկում էր պարսից Յագկերտ Բ.-ի կրօնափոխութեան հրովարտակ պահանջի դէմ, եթէ հայերն ընդունէին եւ խոնարհաբար ենթարկուէին պարսից տիրակալի պահանջին այսպիսով վտանգուել էր հայ ժողովրդի ազգային, կրօնական եւ մշակութային ինքնութիւնը:



Վարդանանց ճակատամարտը մէկն է մեր անցեալի կարեւոր դրուագներից, որ ամէն տարի տօնուում է փետրուար ամսում մեր եկեղեցու կողմից որպէս ազգային եւ կրօնական տօն, որը տեղի ունեցաւ Արտազ գաւառի Տղմուտ գետի ափին տարածուող Աւարայր դաշտում: Հայկական զօրքը փոքր էր թշնամուց եւ զէնքով նուազ, սակայն աննկուն կամքով եւ ամբարկուռ հաւատքով կռուի ճակատ էր եկել Յագկերտին հասկացնելու, որ ոչ հուրը, ոչ սուրը չի կարող իրենց հաւատքից ետ դարձնել: Հայերը կտրիճօրէն ու հերոսաբար ոգի ի բռին մարտնչեցին թշնամու դէմ, սակայն քաջն Վարդանի նահատակութիւնը պատճառ դարձաւ հայերը նահանջն ու դէպի լեռները, այնտեղից շարունակելու իրենց պայքարը յանուն արդար իրաւունքների ձեռքբերման:

Աւարայրի ճակատամարտը մեզ անմիջական յաղթութիւն չբերեց, սակայն ոգին եւ 1036 նահատակների թափած արիւնը մղիչ ուժ հանդիսացան, ներշնչանքի աղբիւր ծառայեցին Վահանի եւ համախոհների համար կռիւր շարունակելու մինչեւ հայութեան պահանջը իրականացուի: Դա 484 թուականին էր, պարսից Վաղարշը պարտադրուած ընդունեց Նուարսակի դաշնագրով հայոց առաջարկները:

Աւարայրի ճակատամարտը իր էութեամբ դարձաւ օրինակելի դաս հետագայ սերունդների հայրենասիրութեան, ազգասիրութեան եւ ազատութեան գաղափարների որպէս ներշնչանք, որի առկայ ազդեցութիւնն ու արդիւնքը տեսանք ազատագրական շարժումներում, Սարգարսպատի ժողովրդական ճակատամարտում եւ մեր ներկայ Արցախեան ազատագրական կռիւններում:

Յիշելով Վարդանանքը չիշում ենք մեր ողջ պատմութեան ընթացքում հայրենիքի եւ կրօնի համար ընկած նահատակներին, որոնց շնորհիւ մենք կանք, հայր կայ, Հայաստանը կայ, հայոց եկեղեցին կայ՝ ազգի եւ մեր կրօնի պաշտպանութեան առաքելութեան լծուած:

Յիշելով Վարդանանքը չիշում ենք մեր Երկիր-Հայաստանը, ցանկանում ենք հայրենիքը տեսնել հզօր եւ մեր անմահ նահատակների տեսլականների իրականացում:

**ԳՐԱԽՕՍԱԿԱՆ
ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ
Յեղիմակ՝ Վեր. Դոկտ. Վահան Թուֆիկեան**

ԴՈԿՏ. ԱՐԻ ԹՕՓՈՒՋԻՍԻԱՆԵԱՆ

Հայ Աւետարանական Համաշխարհային Խորհուրդի Գործադիր տնօրէն, բազմալատակ հովիւ, համալսարաններու դասախօս, յօդուածագիր ու հեղինակ՝ Վեր. Վահան Թուֆիկեանի արտադրած 37-րդ հատորը՝ **ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ** (The Armenian Evangelical World Council) Խորագրով՝ նուիրուած է 1978-ին հիմնուած սոյն Խորհուրդին՝ որուն Գործադիր-Տնօրէնի պաշտօնը կը վարէ ներկայիս, որոշ ժամանակ մը անոր նախագահը ըլլալէ ետք: Ծուրջ 400 էջեր պարունակող այս պատկերազարդ գիրքը բաղկացած է երկու հաւասար մասերէ՝ անգլերէն ու հայերէն, եւ ունի 33 գլուխ՝ իւրաքանչիւրին սեփական ծանօթագրութեամբ:




Կրտի ներկայութեան եւ սրտաբուխ պատգամին:

1997-ին Երեւանի մէջ հիմնուեցաւ Հայ Աւետարանական Աստուածաբանական Ճեմարան մը: Երկու տարի ետք Խորհուրդը մասնակցեցաւ Հայաստան-Սփիւռք Ա. Խորհրդաժողովին, իսկ 2001-ին Հայաստանի մէջ քրիստոնէութեան իբր պետական կրօն հռչակման 1700-ամեակի պաշտօնական տօնակատարութեան: 2002-ին Խորհուրդին միացան Հայաստանի ու Եւրասիոյ Հայ Աւետարանական Եկեղեցիները: 2003-ին կազմակերպուեցաւ Հայ Աւետարանական Հովիւներու Ա. Համաշխարհային Համագումարը Ֆրանսայի մէջ, հրատարակուեցաւ երկարատեւ ի վեր սպասուած Հովուական Ձեռագիրքը, ինչպէս նաեւ արդի արեւելահայերէն Նոր Կտակարանը: 2006-ին Երեւանի մէջ գումարուեցաւ Համահայ Աւետարանական Համագումար մը, ու տօնուեցաւ Հայաստանեայց Աւետարանական Եկեղեցւոյ հիմնադրութեան 160-ամեակը: 2011-ին Խորհուրդը դարձեալ մասնակցեցաւ Հայաստան-Սփիւռք Խորհրդաժողովին եւ Հայաստանի Գ. Հանրապետութեան 20-ամեակի հանդիսութեանց: Նմանապէս 2011-ին ունեցաւ իր ներդրումը Հայաստան-Սփիւռք Ե. Խորհրդաժողովին:

Խորհուրդը կը ջատագովէ Հայ Աւետարանական Եկեղեցւոյ խղճի ազատութեան հիմնական սկզբունքը: Սակայն կը հաւատայ, թէ կեդրոնաձիգ եկեղեցավարական դրութեան մը բացակայութիւնը կրնայ փորձութիւն դառնալ Եկեղեցական Միութեան մը թերազմանին առնուած որոշումները կիրարկելու իր պարտականութիւններուն մէջ: Ուստի կը հրաւիրէ իր բաղկացուցիչ եկեղեցական Միութիւններն ու կազմակերպութիւնները, որ իրենց ուղղութիւնը կեդրոնացնեն իրենց նմանութիւններուն վրայ, նաեւ վերահասու ըլլան այն իրողութեան, թէ քանի որ Քրիստոսի Մարմինին անդամներ են փոխադարձաբար իրարմէ կախեալ են:

Կը շնորհաւորենք Խորհուրդին անխոնջ եւ ժրջան Գործադիր Տնօրէնը, սոյն համապարփակ գիրքին համար, զոր կը յանձնարարենք ընթերցող հասարակութեան: Հայաստանեայց Աւետարանական Եկեղեցիներու ներկայ վիճակով եւ ապագայ մարտահրաւէրներով հետաքրքրուող անձեր, այս գիրքին օրինակներ ունենալու համար կրնան դիմել հետեւեալ հասցէին, Armenian Heritage Committee, 3922 Yorba Linda Blvd., Royal Oak, MI 48073, USA.

**1915-Ի ՄԱՍԻՆ ՏԻԱՐԲԵՔԻՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ
ՎԿԱՅՈՒԹԻՆՆԵՐԸ՝ ԹՈՒՐԲԻԱՅՈՒՄ
ԹՈՂԱՐԿՈՒԱԾ ԳՐՔՈՒՄ**



Աղնան Չելիքն ու Նամըք Քեմալ Դինչը «Հարիւրամեայ հոգոց. Դիարբեքիւրը հաւաքական իշխողութեան հետքերով՝ 1915-ին» վերտառութեամբ գրքում հաւաքել են կենդանի վկայութիւններն ու պատմել, թէ ինչպէս են 100 տարի առաջ Դիարբեքիւրում (Տիգրանահերտ) սպանուել հայերը:

Ինչպէս հաղորդում է Tert.am-ը, գրքի մասին հեղինակները պատմել են Radikal-ին:

Պարբերականի հարցազրոյցը հեղինակների հետ ներկայացվում է մասնակի կրճատումներով.

«Դիարբեքիւրը թէ՛ իր հայ բնակչութեան, թէ՛ այլ շրջաններից տեղահանուած հայերի այնտեղ հաստատուելու պատճառով 1915-ի խորհրդանիշ քաղաքներից մէկն է դարձել:

Թէեւ 100 տարի է անցել, սակայն ցաւերը դեռ կենդանի են այս քաղաքում, եւ ժողովուրդը դրանք այնպէս է պատմում, ասես այդ ամէնը երէկ է տեղի ունեցել:

Աղնան Չելիքը նշում է, որ 1915-ը բնութագրելու համար Դիարբեքիւրում ապրող տարբեր մարդիկ տարբեր արտայայտութիւններ են օգտագործում, սակայն ընդհանուր կէտը մէկն է՝ բոլորն էլ ցանկանում են իրադարձութիւններն օբիեկտիւ ներկայացնել: Քրդերը տեղի ունեցածը քրդերէնով բնութագրում են որպէս «ոչնչացում», «արմատը չորացնել», «ոչնչացման շրջան»:

Նամըք Քեմալ Դինչը նշում է, որ հայերի իշխողութիւններում քրդերը դրական չեն յիշուում, իսկ քրդերի համար ճիշտ հակառակն է: Նրանք հայերի մասին հիմնականում դրական են յիշում ու պատմում:

«Հայերն ամէն ինչ կարողանում էին անել, ստեղծագործ էին, իրենց գործը լաւ էին անում: Նրանց աչքի առաջ ժամանակակից դպրոց ունեցող հայ համայնք է եղել: Նրանք այդ հիացմունքի մասին գրել են 1915-ից առաջ հրատարակուած քրդական թերթերում», - պատմում է նա:

Դինչը նշում է, որ քրդերը հայ մտաւորականների, ակտիւիստների մասին գովեստով են խօսում, առաջ են քաշել նրանց իշխանութիւնից օգտուելու անհրաժեշտութեան հարցը:

Հեղինակների հաւաստմամբ՝ քրդերն ազդուել են նաեւ հայերի մշակութից:

«Տատիկս երեխաների համար հայ թխելիս մեր ճակատին խաչակնքում էր: Նրա երեխաներից ոմանց անունները հայկական էին: Պատճառն այն էր, որ այդ երեխաները փոքր տարիքում էին սպանուել: Օրինակ՝ երեխաներից մէկին Տիգրան անունն էր տուել: Նա հաւատում էր, որ հոգեաւ հրեշտակը նրա կեանքը չէր վերցնի», - պատմել է Աղնան Չելիքը:

Նամըք Քեմալ Դինչն էլ նշում է, որ քաղաքական դրդապատճառներից բացի եղել են նաեւ քրդերի կողմից հայերին սպանելու կրօնական դրդապատճառներ: Օրինակ՝ 6 հայի սպանած մէկը համոզուած էր, որ դրախտ ընկնելու համար պէտք է այդ թիւը 7-ի հասցնել: «Այդ պատմութիւնը շատ ենք լսել: Ասում էին՝ «Դրախտն ապառաջը 49 եմ», - ասել է նա:

Մէկ այլ գործօն էլ վախն էր: Ասում էին, որ Ուրբաթ օրը հայերը պէտք է մզկիթների վրայ յարձակուեն ու բոլոր մուսուլմաններին սպանեն: Սակայն դա այդպէս չէր, Դիարբեքիւրում հայերը նման ուժ չունէին:

Հեղինակները խօսել են նաեւ յատկապէս 1980 թուականից յետոյ հայերի հետքերը ջնջելու քաղաքականութեան մասին:

«Հայերից մնացածը ջնջելով՝ փորձ էր արվում մոռացութեան տալ այն, որ ժամանակին նրանք եղել են այստեղ: Այդ առումով գանձ որոնողները մի կողմից էին փորձում հարուստ հայերին պատկանած ունեցուածքին տիրանալ, միւս կողմից էլ՝ պետութիւնն էր փորձում ոչնչացնել հայերի մշակութի հետքերը:

Գրքի հեղինակները խօսել են նաեւ Յեղապանութիւնից փրկուած հայերի մասին, նշել, որ թէեւ մեծ մասը եղել են կանայք, ովքեր մուսուլմանների հետ են ամուսնացել, սակայն եղել են նաեւ տղամարդիկ: Ըստ նրանց դիտարկումների՝ փրկուածների թիւում աւելի մեծ տեղ են զբաղեցրել հարուստների երեխաները: Նրանց պահպանելը յոյս են ունեցել, որ կը տիրանան նրանց ունեցուածքին, կամ կը կարողանան փրկագին վճարել»:

ՆՉՊԵՍ ԱՄՐԱՑՆԵԼ ԱՍՈՒՍՆԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ԿԵՍ ԽՕՍՔԵՆ ՀԱՍԿՆԱԼ ԶԻՐԱՐ

Հասկնալի է, որ ամուսնական երջանկությունը կախեալ է երկու-քնն, սակայն կինն է, որ ունակ է սիրելիին թեև տալու, կամ փճացնելու անոր բնաւորութիւնը:

Ներկայացուող խորհուրդները կրնան օգնել աւելի ամրացնելու ամուսնական կապերը:

1. Շնորհակալութիւն ըսէք: Սովորութիւն դարձած ամենապարզ շնորհակալութիւնը կրնայ արագ եւ հաստատուն կերպով բարելաւել ընտանեկան մթնոլորտը: Ամուսինը փոքրիկը դպրոց կը տանի: Առանց ձեռնարկի ինչորանքին երեկոյեան որոշ իրեր հաւաքած է խոհանոցին մէջ: Ինքնուրոյն, առանց յուշելու, նկատած է, որ մարզադահլիճին մէջ թափած ձեռքը ջանքերը իզուր չեն անցած: Անկեղծօրէն շնորհակալութիւն յայտնեցէք անոր եւ մի մոռնաք ուրախանալ, որ ձեր կողքին այդքան ուշադիր տղամարդ կայ:

2. Ըսէք, որ ինքը ձեզի համար շատ հաճելի է: Ի հարկէ, յաճախ ըստած «կը սիրեմ քեզ»-ը աւելի շատ կը հանդիպինք մեկտորամաներու մէջ, քան մեր իրական կեանքին, սակայն, այնուամենայնիւ, համոզուեցէք, որ ձեր ամուսինը ամէն օր ձեզմէ որեւէ լաւ բան կը լսէ: Բարձրաձայն հիացէք իր մով, իր գրգռմով, ընդգծեցէք անոր արժանիքները, պարզապէս, ի միջի այլոց, ըսէք. «Որքան լաւ ես դուն»: Պիտի տեսնէք, արդիւնքը պարզապէս հրաշալի պիտի ըլլայ:

3. Հագուեցէք ձեր ամուսինին համար: Հիւր կամ ընկերուհիներու հետ հանդիպման երթալու ժամանակ դուք հանգամանօրէն կ'ընտրէք ձեր հագուստը, կը փորձէք դիմադարձարման նոր ձեւեր: Քիչ մը փոխեցէք ձեր մօտեցումը. եղէք ամենազեղեցիկը ո՛չ թէ ուրիշներու, այլ սիրելի ամուսինի համար: Համոզուեցէք, որ դուք գիտէք, թէ յատկապէս ո՛ր հագուստները հաճելի են անոր համար, մինչեւ անոր հետ չխորհրդակցիք՝ կտրուկ մի փոխէք ձեր սանտրուածքը, իսկ ընտանիքով կիրակնօրեայ զբօսանքի երթալու ժամանակ նախապատուութիւնը տուէք ո՛չ թէ յարմարաւէտ ձիւղերուն, այլ գեղեցիկ շրջագեղատին կամ կիսաշրջագեղատին: Շատ պարզ է, սակայն

բաւական արդիւնաւէտ:

4. Եղէք անոր կողմէն: Կ'արժէ յիշել, որ դուք ոչ միայն հասուն կին եւ տղամարդ էք, որ օր մը որոշած էք համատեղ կեանք վարել, այլ՝ դուք մէկ խումբ էք. իսկ մօտ մարդիկ կ'աշխատին սատարել իրարու, այնպէս որ լաւ պիտի ըլլայ աշխատիք ըլլալ ամուսինի կողքին բոլոր պարագաներուն՝ թէ՛ աներմօր հետ հակամարտութեան, թէ՛ անհափազանք որդիի հետ բանավէճի, թէ՛, երբ աշխատանքի մէջ որեւէ անախորժութիւն տեղի ունեցած է: Այս պարագային, հաստատ, հարկ չկայ դառնալու անոր հոգեբոյժը, սակայն թող որ ձեր ամուսինը հաստատ գիտնայ, որ երբ որեւէ բան պատահի, դուք անկասկած փամփուշտներ պիտի մատակարարէք իրեն: Եւ, բնականաբար, պէտք չկայ անոր վրայ ուշադրութիւն հրաւիրելու կամ վէճեր սկսելու հարազատներու, ընկերներու եւ գործընկերներու ներկայութեամբ:

Միայն միակ եղած ժամանակ եւ միայն այնպէս, որ չվիրաւորուի անոր ինքնասիրութիւնը:

5. Օգտագործեցէք «հրաշալի գաղափար է» արտայայտութիւնը: Ընտանեկան շատ վէճեր կը ծագին պարզ պատճառներէ. կինը կը մտածէ, որ իր ամուսինը՝ «կը սաւառնի երկնքի վրայ», «Երազներու գիրկը ինկած է», կամ շատ տարուած է հեռանկարային ծրագիրներու մշակումով՝ ի հաշիւ տնային գործերու: Սակայն նոյնիսկ, եթէ անոր հերթական գաղափարը ձեզի այնքան ալ հանճարեղ չի թուիր, աշխատեցէք մեքենայաբար շարտաբերել մօտաւորապէս այս արտայայտութիւնը.

«Ոչ, ատիկա պարզապէս չի մարութիւն է»: Դադար տուէք, մտքի մէջ հաշուեցէք միչեւ երեք եւ ըսէք. «Այո, ատիկա հետաքրքրական է»: Ի դէպ, ձեր ամուսինը լրիւ իրաւունք ունի որեւէ բան ուզելու եւ ուղիներ որոնելու իր երազանքը ի կատար ածելու համար:

6. Մի ձգտիք անոր հետ մէկ-միասնութիւն դառնալ: Ի հարկէ, մէկ կողմէն հրաշալի է դուն քեզի «երկրորդ կէս» գրալը ու ներդաշնակ շնչելը, սակայն հոգեբանները կը յիշեցնեն՝ այդպիսի լիակատար

«միաձուլումը» կրնայ վտանգաւոր միտում դառնալ: Կարելի է, որ ամուսիններէն իւրաքանչիւրին մօտ մնայ անձնական տարածութեան գօտի՝ ուղղակի այնքան, որքան անոր անհրաժեշտ է: Այնպէս որ ունեցէք սեփական հետաքրքրութիւններ եւ զբաղումներ ու մի նեղուիք, եթէ ամուսինը, յանկարծ, ինչ-ինչ պատճառներով չկիսէ զանոնք ձեզի հետ, եւ ընդհանրապէս ուզէ միակ մնալ: Եթէ երկուքդ ալ սորվիք յարգել իրարու հետաքրքրութիւններն ու պահանջները, ուստի ատիկա պիտի ամրացնէ ձեր ամուսնութիւնը:

7. Եղէք լաւ տնտեսուհի. այո, ասիկա շատ առօրեական, սակայն բաւական արդիւնաւէտ խորհուրդ է. սորվեցէք տնտեսութիւնը վարել այնպէս, որ անիկա ոչ հերոսութիւն դառնայ, ոչ ալ՝ խնդիր: Ամուսինը, որուն աշխատանքէն ետք կը սպասէ ցուցակով ուտելիքներ գնելը, իսկ հանգստեան օրերուն նաեւ տնային գործերն ու առեւտուրի կեդրոն յաճախելը, հազիւ թէ ինքզինք երջանիկ զգայ: Սորվեցէք կենցաղի թեթեւացման ժամանակակից եղանակները. նախ եւ առաջ՝ անոնք, իրօք շատ են, եւ երկրորդ՝ անոնք թոյլ պիտի տան խուսափելու ընտանիքի բոլոր անդամներու ներգրաւումով կազմակերպուող լայնածաւալ մաքրութիւններէն, միաժամանակ լրացուցիչ ազատ ժամանակ պիտի ստեղծէ համատեղ հանգիստի համար: Տարածութեան հաշուենկատ կազմակերպումը, աւելորդ եւ հին իրերու բացակայութիւնը, ճաշացանկի ծրագրաւորումը տունը կը դարձնեն յարմարաւէտ եւ ամուսիններուն կ'օգնեն սորվելու ուրախութեամբ ջանք եւ ժամանակ ներդնել այնտեղ:

8. Հարցեր տուէք: Դուք, հաւանաբար, կը կարծէք, թէ ամուսնութեան տարիներուն ընթացքին

կրցած էք լաւ ճանչնալ ձեր ամուսինն ու անոր սովորութիւնները, հաստատ գիտէք, թէ ինչի մասին կը մտածէ ան, ինչի կը ձգտի եւ ինչ արտայայտութիւն պիտի ունենայ յաջորդ պահուն: Իսկ մարդիկ, ի դէպ, կը մեծնան եւ կը փոխուին: Այնպէս որ, խորհուրդ կը տրուի երբեմն հարցնէք. Ի՞նչ կ'ուզէ ան ձեր ընտանեկան կեանքէն, ձեզմէ, եւ կեանքէն՝ ընդհանրապէս: Ինչի՞ մասին կ'երազէ: Ինչպէ՞ս փոխուած են անոր պատկերացումները կեանքի մասին վերջին շրջանին: Որքան լաւ հասկնաք գիրարը, այդքան ջերմ պիտի ըլլան ձեր յարաբերութիւնները:

9. Մի փորձէք փոխել զինք: Մտերիմ մարդը այնպէս ընդունելու, ինչպէս որ է, առանց նախապայմաններու սիրելու անոր յատկութիւնը՝ երջանիկ ամուսնութեան գլխաւոր պայմանն է, որուն մասին, սակայն, յաճախ կը մոռնանք: Չէ՞ որ ձեր սիրելի դուք ընտրած էք, գիտակցօրէն եւ համակողմանի գնահատած էք անոր որակները, որոշած, որ պատրաստ էք հաշտուելու անոր թերութիւններուն հետ: Ուրեմն, փորձեցէք յաղթահարել զայն պարբերաբար (կամ անընդհատ) «լաւացնելու», «վերադաստիարակելու» եւ, ընդհանրապէս, գայն պարկեշտ դարձնելու ցանկութիւնը: Իսկ եթէ չ'ըլլար, ուրեմն անհրաժեշտ է հոգեբանին դիմել:

10. Հաւատացէք անոր ուժերուն, գաղտնիք բացայայտէք. ձեր ամուսինը շատոնց արդէն մեծցած է եւ ի դէմս ձեզի ան կարիք չունի երկրորդ մօր, կամ խիստ ուսուցչուհի: Հասուն տղամարդը լիովին կրնայ զաւակներուն համար ընթրիք պատրաստել, արձակուրդ երթալէ առաջ հաւաքել իր իրերը, իրեն համար հագուստ գնել եւ կամ ատամնաբոյժի երթալ: Խնդր՞ր կայ: Թող ինքը լուծէ զայն:

HMM ATHLETIC ASSOCIATION
SOCCER

BOYS AGES 9-17 WELCOME

Call us today to join!
Vartan Kojababian (818) 384-2987
Anto Shahinian (626) 354-7778

ԼՈՅՍ Է ՏԵՍԵԼ

ՆԵՐՍԷՍ Տ. ՄԵՍՐՈՊԵԱՆ (ԲԱԼԱՅԵԱՆ)

Ներսէս Տ. Մեսրոպեան-Բալայեանի Բերրուծանքի հաւաքածոն. 120 էջերից բաղկացած. «Երեսն» տպարանից.

Գրքի կազմի եւ պատկերի ձեւաւորումն ու նկարազարդումը՝ Նարեկ Նազրումեանի - Reak Point Studio:

Դիմել Գլենդէյլի Ապրիլ (818) 243-4112), Պեքն (818) 244-3830) եւ Սարդարապատ (818) 500-0790) գրատուններին, Երեսն տպարանին, կամ հեղինակին՝ (818) 240-9604 համարով:

2014

ԽՕՍԲՈՎ ՓԻԼԱԻ ԶԵՓԻՐ, ՊԱՐՈՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Շարունակում է 7-էն

իրենց «հասարակաց պատմութեան հետեւանքով հասարակաց ցաւ մը ունին եւ պէտք է որ երկուստեք այդ ցաւը բաժնեն եւ այդ ձեւով զիրար հասկնան»: Իր կարծիքով սխալ է երկու ժողովուրդներու դարաւոր անցեալի հարուստ եւ հասարակաց փոխ-յարաբերութիւններու «պատմութիւնը լոկ ենթակայ դարձնել պատերազմի եւ բախումի հետեւանք եղող հոգեխոց փրկիստափայլութեան»:

Այդ տեսաբանական յօդուածի կառուցը եւ խորքը հիմնուած են թունաւոր տրամաբանութեան մը վրայ որուն նպատակէտը եղած է Հայ Դատի եւ անոր հետ առնչուող եւ կապ ունեցող պատմական, քաղաքական, տնտեսական եւ ընկերային հիմնախնդիրները իրենց խորքէն պարպել եւ Հայոց Յեղասպանութիւնը վերածել պետական կարգուսարքային անաստակութիւններու հետեւանք հանդիսացող ողբերգութեան մը, ուր յանցաւորներու ինքնութիւնը յատակ հասցէատետր մը չունի:

Պարոն Տաւուսոյլու չի՛ բաւականանար ատով միայն: Իր յօդուածին մէջ հայ ազգային ինքնութիւնը եւ անոր ճանաչողութիւնը կը սահմանափակէ Օսմանեան ժամանակաշրջանով եւ այդ ձեւով կը ջրէ՛ հայութեան ազգային անցեալի շարունակականութիւնը իր հայրենական հողերուն վրայ՝ դարերու հոլովոյթին ընդմէջէն: Իր տեսակէտով հայութիւնը իբրեւ ազգային էութիւն նոր եւ արուեստական յորինում մըն է վերջին հինգ հարիւր տարիներուն ու իբրեւ այդպիսին արեւմտեան Հայաստանի նահանգներուն կապակցութեամբ անոր ներկայութիւնը օրինական եւ իրաւական հողային պահանջատիրութեան հիմք չի՛ կրնար ծառայել: Մէկ խօսքով կը փորձէ ջրել Արեւմտեան Հայաստանի հողատարածքին հայկական ծագումը եւ անկէ բխող պահանջատիրական տրամաբանութիւնը:

Այդ յօդուածին մէջ Տաւուսոյլու կ'ընէ նաեւ կարգ մը այլ հաստատումներ որոնց նպատակը ուրիշ բան չէ քան թէ պատմութեան աղաւաղումը եւ անոր վերադասաւորումը: Այսպէս, ան կը ճշդէ:

-Օսմանեան կայսրութիւնը հայ էութիւնը չի ճնշեց այլ անոր գոյութիւնը ապահովեցուց պաշտօնական կառուցներուն մէջ ընդգրկելով զայն:

-Եթէ պատմութեան մեր հասկացողութիւնը հիմնաւորենք միայն «տեղափոխութեան» դէպքով անխուսափելի է որ անոր հետեւանքով երկու հաւաքականութիւններուն միջեւ արհամարհանք եւ թշնամանք սերմանուի:

-Մենք Անատոլուէն «տեղափոխուած» ամէն հաւաքականութիւնները եւ ո՛չ թէ միայն ծնունդով թուրքերը, կը նկատենք մե՛ր սփիւռքը:

-Երկուստեք «Արդար Յիշողութեան» գարգացումը եւ երկու հաւաքականութիւններու միջեւ հաշտութեան մը գոյացումը կը պահանջեն որ հայեր վերանային

պատմութեան իրենց միակողմանի մեկնութիւնը:

Մէկ խօսքով հայ ժողովուրդը պէտք է գոհ է իր պատմութիւնը եւ մէկդի դնէ իր պահանջատիրութիւնը որպէսզի «Արդար Յիշողութիւն» մը ստեղծուի Հայ-թուրք շարաբերութիւններուն մէջ եւ այդ ձեւով երկու ժողովուրդներուն միջեւ հաշտութիւն գոյանայ:

Իր այդ յօդուածով Տաւուսոյլու կ'ուզէ ընթերցողը առաջնորդել այն համոզումին եւ եզրակացութեան թէ Օսմանեան կայսրութիւնը հայերու հանդէպ գտնուած է բարեսէր եւ բարեմիտ, թէ ցեղասպանութիւն չէ կատարուած, այլ պարագաներու պարտադրանքին տակ պարզապէս եղած է «տեղափոխութիւն» մը, որուն հետեւանքով մէջտեղ եկած են թէ՛ թուրք եւ թէ՛ հայ ծնունդով սփիւռքներ, որոնք կը պատկանին այսօրուայ թուրքերի, հետեւաբար ստոնքներին հարցեր են, եւ թէ օտարները իրաւունք չունին խառնուելու այդ հարցերու կարգաւորման եւ լուծումի գործընթացին:

Իր յօդուածին մէջ պարոն Տաւուսոյլու ոչ մէկ ատեն կ'ըսէ թէ ինչպէ՛ս եւ ինչ ձեւով թուրքերի ապէտք է, կամ կրնայ, լուծել այդ «տեղափոխութեան» արդիւնք հանդիսացող պատմական աղէտներու հետեւանքները:

Դեռեւս հարկ է որ չի շեղումի կարգով շարք մը իրողութիւններ մատնանշել պրն. Տաւուսոյլուին:

-Իր սահմանումով սապէս կոչուած «տեղափոխութեան» հետեւանքով ազգի մը դէմ աննախադէպ ոճիր մը գործուած է Օսմանեան կայսրութեան կողմէ: Այդ «տեղափոխութիւնը» գրօսաշրջիկային պտույտ մը չէր դէպի Տէր Զօրի անապատները ուր հարիւր հազարաւոր անմեղներ զոհ գացին, որքան ալ այժմու թուրքերի դեկավարները կը փորձեն բառախաղերով ցեղասպանական արարքը վարագործել «տեղափոխութեան» պիտակով: Արդեօք մէկ ու կէս միլիոն զոհերու աղիտալի վախճանի պատասխանատուութեան ճանաչումը թուրքերի կողմէ երկու ժողովուրդներու հաշտութեան հիմք չի՞ կրնար ծառայել:

- Այդ «տեղափոխութեան» պատճառով հայկական ինչքերու, շարժական եւ անշարժ գոյքերու, ստացուածքներու եւ կալուածներու անօրինական եւ աւազակային բռնագրաւում մը գործուած է համատարած քայլին տարողութեամբ Արեւմտեան Հայաստանի նահանգներուն եւ Օսմանեան կայսրութեան հայաբնակ շրջաններուն մէջ: Այդ անօրինական բռնագրաւումն օգտուած են թուրք պետականութիւնը եւ մեղսակից թուրք անհատներ եւ պետական վարչակազմի անդամներ, որոնք անցնող հարիւր տարիներուն փորձած են այդ հարցով ամբողջովին մոռացութեան տալ մարդկային ընկերութիւններուն մօտ տիրող անհատական ստացուածքի անձեռնմխելիութեան օրինակարգը եւ անոր հիմունքները: Մասնագէտներ այն եզրա-

կացութեան չանգած են որ անձնական եւ համայնական կայքերու այդ աւազակութեան հետեւանքով թրքական հանրապետութիւնը իր ներկայ տնտեսական կարողականութեան հիմքը կը պարտի այդ բռնագրաւումներուն եւ թէ այդ երեւոյթը շարունակուած է հայերու եւ այլ բախտակից փոքրամասնութիւններու պարագային Քեմալական թուրք հանրապետութեան շրջանին ալ: Պարոն Տաւուսոյլու ոչ մէկ չի շատակութիւն կ'ընէ գրաւեալ հայ ազգային եւ անհատ հաստատութիւններու, եկեղեցիներու, դպրոցներու գոյքերու եւ ստացուածքներու իրաւական կացութեան մասին: Այս բռնագրաւեալ կայքերը ատենին միլիոններ տոլարներու հասնող արժէք մը կը ներկայացնէին եւ անոնց մանրամասն արձանագրութիւնները կը գտնուէին թրքական պաշտօնական արխիւներուն մէջ: Այդ բռնագրաւեալ ինչքերու եւ կալուածներու մասին բաւական ուսումնասիրութիւններ ալ եղած են, եթէ պարոն Տաւուսոյլուն տեղեակ չէ այդ մասին:

Արդեօք այդ կալուածներու եւ ստացուածքներու վերադարձը իրենց իրաւատէրերուն երկու ժողովուրդներու հաշտութեան հիմք չի՞ կրնար ծառայել:

-Թուրքերի իր ներկայ սահմաններուն մէջ կազմուած է իր ազգային էութեանն տարբեր ազգութիւններու պատմական հողատարածքներու գրաւումով: Այդ «տեղափոխութեան» հետեւանքով այդ հողատարածքի պատմական տէրերը իրաւազրկուած են իրենց դարաւոր հայրենի հողերէն, հողեր որոնք իրենց ազգային կազմաւորումին եւ էութեան հիմք ծառայած են:

Արդեօք այդ հայրենի հողատարածքի վերադարձը իրենց իրաւատէրերուն երկու ժողովուրդներու հաշտութեան հիմք չի՞ կրնար ծառայել:

Պարոն Ահմէտ Տաւուսոյլու, ինչպէս նաեւ իր շուրջ եղող մասնագէտները, պետական վարչամեքենայի անցեալի եւ ներկայի բարձրաստիճան պաշտօնատէրերը այնքան ալ ապուշ, տգէտ եւ անտեղեակ չեն կրնար ըլլալ երբ հարցը կու գայ Հայ Դատին, Հայոց Յեղասպանութեանն ծագող իրաւական, ընկերային եւ տնտեսական հետեւանքներուն եւ իրարու ընդելուզուած քաղաքական հարցերուն, որոնց մասին այդքան փոթորիկ կայ իրենց շուրջ: Այս պայմաններուն տակ անոնք չեն կրնար այլեւս բառախաղերով միջազգային հանրային կարծիքի ուշադրութիւնը շեղեցնել բուն նիւթէն, կամ տեւապէս կոթնիլ իրենց դաշնակից բարեկամներու մեղսակից անտարբերութեան վրայ այդ հարցի քննարկումը եւ արդարադատ լուծումը թաղելու իրենց քաղաքական, տնտեսական կամ ռազմագիտական հաշիւներուն մէջ: Թուրքերի կ'ընեն յաւիտեանս կերպով նաեւ տնտեսական եւ քաղաքական բնոյթ ունեցող սպառնալիքներ տեղացնել բոլոր անոնց դէմ որոնք

մարդկային իրաւունքներու պաշտպանութեան անունով կը փորձեն թուրքերի չի շեղեցնել թէ ներկայ իր վարքագիծը խոտոր կը համեմատի իր դաւանած միջազգային սկզբունքներուն եւ որդեգրած յանձնարարութեանց լոյսին տակ:

Պարոն Տաւուսոյլուի եւ թրքական պետութեան որդեգրած այս ռազմավարութիւնը ո՛չ մէկ արդիւնք կրնայ տալ այնքան ատեն որ հայ ժողովուրդը իր ամէն հատուածներով, համայնքներով, հայրենի եւ սփիւռքեան բաղկացուցիչ տարրերով կը մերժէ այս արուեստական մօտեցումները եւ անտեղիտալի ու միակամ կամքով կը շարունակէ ճշմարտութեան եւ արդարադատութեան իր պայքարը՝ ծրագրուած եւ գիտակից կերպով:

Թուրքերի մտահոգ է հայ Սփիւռքի եւ հայրենիքի ձեռնարկած, ծրագրած ու յառաջիկային տակաւին ձեռնարկելի ջանքերու բնոյթով եւ տարողութեամբ, ինչպէս նաեւ անոնցմէ բխող հետեւանքներու հեռանկարով ու բնականաբար վերանորոգ մտասեւեռումով կանխարգելիչ միջոցներ կը ծրագրէ եւ ի գործ պիտի դնէ, անոնց ազդեցութիւնը սահմանափակելու, չէզոքացնելու կամ ջլատելու համար:

Պարոն Ահմէտ Տաւուսոյլուի յօդուածը կ'արձանագրուի այդ ապիկար փորձերու ծիրին մէջ: Փոխանակ գործնական լուծումներու մասին մտածելու, հայ եւ թուրք ժողովուրդներու միջեւ բարի կամեցողութեան եւ հաշտութեան միջոցով մը ստեղծելու եւ զարգացնելու, ան կրկնակի եւ ապարդիւն ջանք կը թափէ պատմութեան ղեկնազորութիւնները վերադասաւորելու եւ պատմական նոր տարբերակ մը ստեղծելու ի նպաստ թուրքերի: Ան բառերու կոչտի մը մէջ եւ արհամարհելի փրկիստափայլական մօտեցումի մը օգտագործումով կ'ուզէ այն սպաւորութիւնը ստեղծել թէ թուրքերի փոխուած է, թէ թուրքերի քաղաքակիրթ չափանիշերու կը հետեւի եւ թէ թուրքերի հետամուտ է իրարհասկացողութեան ճամբով նոր հեռանկարներ բանալու հայ եւ թուրք յարաբերութիւններուն առջեւ:

Պարոն է թէ պարոն Տաւուսոյլու ամէն ջանք կը թափէ նորագոյն աճաբարարական ձեռնարկեցութեամբ մը «խօսքով փրկաւեփել» եւ արդիւնքը հրամայելու հայութեան, այն յոյսով որ հայութիւնը բարեմտօրէն կը գիշի, կը մոռնայ եղածը եւ կ'որդեգրէ իրեն ուղղուած «թրքական սփիւռքին» մաս կազմելու հրահրը:

Այս մտադրութիւնը մեր հայրերու եւ անոնց յաջորդող սերունդներուն ապրած պատմութեան անյարիր խօսքեր են եւ արդարադատ լուծումի հակոտնեայ բանաձեւումներ:

Իբր պատասխան հայութիւնը պարզօրէն կ'ըսէ:

-Պարոն Տաւուսոյլու. «Խօսքով փրկաւ չեփի՛ր»:



SYRIAN ARMENIAN RELIEF FUND

Save Support Sustain

Syrian Armenian Relief Fund
P. O. Box 1948
Glendale, CA 91209-1948

www.syrianarmenianreliefund.org

SEROP'S CAFE

GREEK & LEBANESE FOOD

SERVING BATON ROUGE SINCE 1979

ՄԱՐԱԶ



ԱԶԱՏՈՒՀԻ (ՍԱՐԳԻՍԵԱՆ) ՏԵՓՈՅԵԱՆ (1924-2015)

Մրտի դառն կակիծով կը գուժենք մեր սիրեցեալ մօր, մեծ մօր եւ հարազատին **ԱԶԱՏՈՒՀԻ ՏԵՓՈՅԵԱՆԻ** մահը որ պատահեցաւ Երկուշաբթի, 9 Փետրուար, 2015ին:

Յուզարկաւորութեան արարողութիւնը տեղի պիտի ունենայ Հոլիվուտ Հիլզի Ֆորեսթ Լոն գերեզմանատան սպիտակ մատրան մէջ, Երեքշաբթի, 17 Փետրուար, 2015, առաւօտեան ժամը 9:30ին: Ապա թաղումը նոյն գերեզմանատան մէջ:

- Սգակիրներ՝
- Զաւակները՝
- Արա եւ Լուսին Տեփոյեան եւ զաւակները Գեղամ եւ Վազգէն Մանուկ եւ Նելլի Տեփոյեան եւ զաւակները
- Պերճ եւ Շիրա եւ զաւակը Ռօզօ
- Սերժ Տեփոյեան
- Վարդան եւ Կարինէ Տեփոյեան եւ զաւակները Վահագն եւ Ռաֆֆի եւ համայն Տեփոյեան, Մանուկեան, Պասմաճեան, Հաճընեան, Գալայճեան, Մասունեան, Պաղտասարեան, Մանուկեան, Պասմաճեան, Հաճընեան եւ Սմասն ընտանիքներն ու բարեկամները:

Փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւնները կը խնդրուի կատարել «Մասիս» շաբաթաթերթին:

ՅԱՄԱԿՑԱԿԱՆ

ԱԶԱՏՈՒՀԻ ՏԵՓՈՅԵԱՆԻ մահուան տխուր առիթով **Ս.Դ.Հ.Կ.** Փարամագ մասնաճիւղի վարչութիւնն ու անդամները իրենց խորագրաց վշտակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի զաւակներուն եւ ընտանեկան համայն պարագաներուն, մասանաւորաբար **Տէր եւ Տիկ. Մանուկ եւ Տէր եւ Տիկ. Վարդան Տեփոյեաններուն:**

ՅԱՄԱԿՑԱԿԱՆ

ԱԶԱՏՈՒՀԻ ՏԵՓՈՅԵԱՆԻ մահուան տխուր առիթով **Հ.Մ.Մ.ի** Տիկնանց վարչութիւնը իր վշտակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի ընտանեկան համայն պարագաներուն, մասանաւորաբար **Տէր եւ Տիկ. Մանուկ եւ Տէր եւ Տիկ. Վարդան Տեփոյեաններուն:**

ՅՈՒՇ ԵՐԵԿՈՅ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԽԱՐԲԵՐՈՂՅԻ

Ծարուակուած էջ 14-էն

«1915 Ապրիլի ձերբակալուածներուն մէջ, նաեւ ինքն ալ էր, ու անոնց պէս ինքն ալ տուն չվերադարձաւ: Այսպէս 1874ին ծնած, 1915ին Զարդարեան կը շրջէր 42 տարեկան հասակի մէջ իր կարապի երգը չերգած, երազի ու ստեղծագործութեան կենսայտրդ լիութեան մէջ, սակայն ան իր նորավէպով հանդիսացաւ ազատագրական մեր պայքարի իւրաքայտուկ արձագանգը», շեշտեց Պետիկեան: Ան նաեւ չիւնց, թէ տառապանք, վիշտ, դառնութիւն եւ առաւել հայ բնաշխարհ, հայկական իրականութիւն եւ նահապետական կեանք, ասոնցմով է, որ Զարդարեան կերտած էր իր կերպարները, մաքուր լեզուով, բարձր ոճով, ներդաշնակ եւ նոյնքան ալ բժախնդիր:

«Կարդացէ՛ք, Ռուբէն Զարդարեանը եւ անոր «Յայգալոյսը», ու միշտ Զարդարեան կարգալով շնչեցէք հայրենի այդ հարազատ օդը եւ հաւատացէ՛ք, երբ Զարդարեան կարդաք, ձեր աչքին առջեւ պիտի պատկերանայ ամբողջ ժողովուրդ մը, իր գիտակցութեամբ եւ իր շքեղութեամբ, որուն այնչափ կարօտը ունինք այս օրերուն», ամբողջացուց Պետիկեան իր խօսքը:

Իբրեւ երկրորդ բանախօս, փրոֆ. Օշին Քէշիշեան ներկայացուց ու մէջբերումներ կատարեց խորագրաց վարչութիւնը ծնունդ գաւառական գրականութեան առաջին գրագէտ Յովհաննէս Յովհաննէսեանը որ կոչուած էր Թլկատինցի, իր ծննդավայրին՝ Թլկատինցի անունով:

«1860ին ծնած Յովհաննէս Յարութիւնեան խորագրի Սմբատեան վարժարանին մէջ աշակերտած էր եւ ապա դասախօսած՝ Ս. Յակոբայ թաղին Ազգային վարժարանը իր շուրջը համախմբելով բազմաթիւ աշակերտներ, որոնցմէ էին Զարդարեան, Նուրիկեան եւ ուրիշներ»:

Փրոֆ. Քէշիշեան անդրադարձաւ նաեւ Թլկատինցի կեանքի մանրամասնութիւններուն ու պարզեց անոր ութը զաւակներու հայր ըլլալն ու անոր նուիրումը իր սրբազան գործ՝ ուսուցչութեան:

«Անխոնջ ու բազմադիւն հայ այս մտաւորականը, որ իր ինքնաշխատութեամբ յառաջ եկած էր իր առողջ դաստիարակութեան շնորհիւ մեր ազգին պարզեցեց ազգանուէր սերունդ մը, տոհմիկ եւ առողջ, միաժամանակ իր հիմնած անհատական կրթարանը կանգուն պահելով մինչեւ իր եղբրական մահը: Ան դարձաւ գաւառի գրականութեան ամէնէն ցցուն ու ար-

տայալտիչ դէմքերէն մէկը ու մնաց անյողողող պատնէշի վրայ»:

Խօսելով Թլկատինցի գործերուն մասին, Քէշիշեան չիւնց թէ անոր բոլոր գրական վաստակը որ բաղկացած է քերթուածներէ, քրոնիկներէ, նորավէպերէ եւ թատերական էջերէ, եւ որոնք բոլորն ալ ունին գաւառային նկարագիր ու կը կրեն կնիքը ժողովրդաշունչ եւ պարզ ոճի եւ որ անխառն ըլլալու արժէքը ունին, կը վկայեն արդիւնաշատ գրագէտի իր համբաւը:

«1915 Ապրիլին ինքն ալ գոհ զնաց ուրիշ հարիւրաւոր մտաւորականներու նման, երբ արդէն հազիւ իր կատարեալ հասունութեան թեւակոխած էր եւ որ պիտի օժտէր մեր գրականութիւնը նորագոյն գործերով» եզրափակեց փրոֆ. Օշին Քէշիշեան իր բաժինը:

Իբրեւ երրորդ բանախօս խորագրի միութեան ատենապետ դոկտ. Կարպիս Տէր Եղիայեան հանգամանօրէն ներկայացուց խորագրի հարազատ գաւառի փրոֆ. Յովհաննէս Պուճիքանեանի կեանքն ու անոր վաստակը, իբրեւ նուիրեալ կրթական մշակ, հրապարակախօս, գրող եւ քարոզիչ:

«1873 ին Զնգուշ ծնած-խորագրի- Յովհաննէս Պուճիքանեան իր նախնական ուսումը ստանելէ ետք բարձրագոյն ուսման փափաքով կ'անցնի գոլէճ եւ յաջողութեամբ աւարտելէ ետք, իբրեւ յառաջիկա ուսանող իր յաճախած գոլէճի կողմէ կ'ուղարկուի Սկովտիոյ Էտինսպրիկ համալսարանը իր ուսումը կատարելագործելու՝ փիլիսոփայական եւ ընկերաբանական գիտութիւններու մէջ»:

Խօսելով Պուճիքանեանի խորագրի մէջ ունեցած աշխատանքին, բանախօսը հարազատօրէն պարզեց, թէ ան խորագրի վերադառնալով ստանձնած էր ավագ դասախօսի ուսուցչապետի պաշտօն՝ Եփրատ գոլէճէն ներս եւ միեւնոյն ժամանակ նշանակուած քարոզիչ:

«Նոյն հաստատութեան մէջ ալ տարիներով ուսուցչութեամբ զբաղեցաւ Պուճիքանեանը եւ որ իր ինքնաշխատութեամբ կրցած էր բարձր յարգանքի արժանանալ: Ան կորովի, բեմբասաց, ուղղամիտ արդարութեան պաշտպան, կեղծիքի թշնամի, անյազ սորվող, այս հայ իտիալապաշտ մշակը խորագրի Սոկրատն էր: Ունենալով հմտալից գրիչ իր պաշտօնավարած գոլէճին իր կեանքով իսկ թիկունք կանգնեցաւ: Անոր անունը անքակտելիօրէն կապուած է խորագրի բարձրագոյն այդ կրթարանին: Իբրեւ քարոզիչ օրինակ դարձաւ գեղեցկօրէն ներդաշնակելու մեր հոգեւոր ու ազգային արմատը ու դարձաւ բարի օրինակը ազգային ներդաշնակութեան եւ համագործակցութեան»:

Տէր Եղիայեան նաեւ անդրադարձաւ խորագրի այս մտաւորականին անխոնջ աշխատանքին, հզօր իմացականութեամբ օժտուած մարդուն եւ չիւնց, թէ ներկայիս իր աղջիկը տիկին Թոփուզիանեան, որ 103 տարեկան է, կ'ապրի Ֆրեզնոյի մէջ, եւ որ ինք անձամբ քանի մը շաբաթներ առաջ տեսնուած էր ու անկէ որոշ յստակ տեղեկութիւններ քաղած հօրը մասին:

«Խօսքերու եւ խորհուրդներու միջուկով կը հետաքրքրուէր, շարունակեց բանախօսը: Պուճիքանեան նաեւ ունէր ներքին ըմբօստ ոգի: Ան նաեւ նիւս բոլոր մտաւորականներու նման եւ հետ դարձաւ գոհ թրքական եաթաղանին, ենթարկուելէ ետք անտանելի շարժարաններու»:

«Զեռնարկին վերջին խօսք առնողն էր Լուս Անճելլաի քաղաքապետութեան խորհուրդի անդամ խորագրի ծնողի գաւառի՝ Փօլ Գրիգորեան, որ անգլերէն լեզուով ամփոփ կերպով եւ ընդհանուր գիծերու մէջ նախ անդրադարձաւ հայկական ցեղասպանութեան իբրեւ պատմական իրողութիւն ու նաեւ կատարեց մէջբերումներ զանազան ուսումնասիրութիւններէ: Ան նաեւ բարի չիւնց իր մեծ մօրեղբայրը Հիւսէյնիկցի- խորագրի- խաչատուր Նահիկեանը իբրեւ հանրային մեծ գործիչ, անձնուէր ծառայող, գիւղին կրթական եւ եկեղեցական գործերուն մէջ դրական աջակցութիւն ունեցող անձնաւորութիւն որ միտք ու հոգի մաշեցուցած էր նոր սերունդին համար: Գրիգորեան շեշտեց, թէ ինք շատ հպարտ էր իր հայրութեամբ եւ յատկապէս իր խորագրի կամ աւելի ճիշդ Հիւսէյնիկցի գաւառի ըլլալուն: Փօլ Գրիգորեան պատմեց, այս նահանգի բարձրաստիճան պաշտօնատարներուն հետ միատեղ Հայաստան իր այցելութիւնը ու մանրամասնեց օտար հիւրերուն հիացմունքն ու սպաւորութիւնները մեր հայրենիքի հանդէպ: Ապա ան չիւնց թէ ինչպէս երբ վերջին անգամ Հայաստան այցելած էր, Ծիծեռնակաբերդի պատերուն վրայ հայրէն տաւերով գրուած խորագրի բաժինը մեծ հպարտութեամբ ամերիկացի իր գործակից ընկերակիցներուն ցոյց տուած էր:

«Զեռնարկը ունէր նաեւ կոկիկ գեղարուեստական բաժին մըն ալ: Այսպէս ազգային եւ ժողովրդական երգերով գեղեցկօրէն ելոյթ ունեցաւ Դաւիթ Սամուէլեան, որ երգեհոնի ընկերակցութեամբ՝ Արամ Լէփէճեանի, հրամցուց երեք երգեր «Զայն մը հնչեց», «Ատանայի կոտորածը» եւ «Գետաշէն»:

Իսկ իրենց կարգին, մայր եւ դուստր Սօսի եւ Սալբի Քերթնեաններ նախ հրամցուցին տաւիղի եւ սրինգի նուագացուցութեամբ «Մարտիկի երգը» ապա Թլկատինցի գրած եւ Համբարձում Պէրպէրեանի երաժշտութեամբ յօրինուած «Սիրտս կը թռչի» մեղեդին, ինչպէս նաեւ Բալուի բառաբանով գրուած ծանօթ սիրերգը, որ Սալբին նախ զայն արտասանեց:

Յիշենք այս երգին բառերն ու երաժշտութիւնը վերցուած էր երաժշտագէտ Պետրոս Ալահայտոյեանի Բալուի երգերը ծաւալուն հատորէն, որ նոյն օրը սրահի մուտքին խորագրի այլ գրողներու երկերուն կողքին, ծախու դրուած էր:

Աւարտին ներկաները հրաւիրուեցան յոտնկայս, երգիչ Սամուէլեանի ընկերակցելու «Կիլիկիա» երգին, որմէ ետք տեղի ունեցաւ հիւրասիրութիւն եւ ապա ներկաները մեծ գոհունակութեամբ բաժնուեցան սրահէն:

Թղթակցութիւնը՝ խորագրի Միութենէն

Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին

T: (626) 797-7680 F: (626) 797-6863
Email: massis2@earthlink.net



Հայոց Ցեղասպանության Հարիւրամեակ

ԱՊՐԻԼ 24, 10¹²

ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ
ՔԱՅԼԱՐՇԱԲ

ՓՈՔՐԻԿ ՀԱՅԱՍՏԱՆԷՆ ԴԷՊԻ
ԹՐՔԱԿԱՆ ՀԻՒՊԱՏՈՍԱՐԱՆ

Հարիւրամեակի Ձեռնարկներ

Ապրիլ 14

Էքումենիք
Արարողութիւն
Cathedral of Our Lady
of the Angels
Los Angeles, CA

Ապրիլ 23

Հանդիսատր
Սուրբ Պատարաք
Սուրբ Ղեւոնդեանց
Մայր Տաճար
Burbank, CA

Ապրիլ 24

Արդարութեան
Քալարշաւ
Փոքրիկ Հայաստանէն
դէպի Թրքական
Հիպատոսարան

Ապրիլ 25

Հսկում
Մոնթեպելլոյի
Ցեղասպանութեան
Յուշարձան
Bicknell Park, Montebello, CA

Ապրիլ 26

Յուշ Երեկոյ
Կազմակերպութեամբ
Կլէմէնտի
Քաղաքապետութեան
Alex Theatre, Glendale, CA

Յաւելեալ տեղեկութիւններու համար այցելեցէ՛ք՝ www.march4justice.org